# ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-ԻՆ ԿԱՊԱՆԸ ԿԸՆՏՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ **ԱՐՏՈՒՐ ԱԹԱՅԱՆԻ** ՕԳՏԻՆ


ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63
(091) 45 90 47
(077) 06 28 02

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան,

Արշակունյաց 2: Ծավալը՝ 5 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 5000, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 27.08.2012թ.:

ԵՐԵՔՇԱԲԹԻ
28 ՕԳՈՍՏՈՍԻ
2012Թ
№ 21 (262)


# Սյունյաց երկիր


www.syuniacyerkir.am


*Խաղաղությո՜ւն ունեցէ՛ք միմեանց միջեւ:*
**ՊՈՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ**



# Կապանցիների հետ՝ հանուն արժանապատիվ Կապանի

Լուսանկարը՝ Սեւիք Քալանթարյանի

## ԽՈՍՔ ԸՆՏՐՈՂԻՆ

Սիրելի՛ կապանցի

Երկրորդ անգամ առաջադրել եմ թեկնածությունս Կապանի քաղաքապետի հերթական ընտրությանը մասնակցելու համար, ինչի առիթով ուզում եմ ձեզ ներկայացնել մտածումներս:

Նախ, ինչո՞ւ նման որոշում ընդունեցի, ի՞նչ մղումներ են ընկած պատասխանատու այդ քայլի հիմքում:

Դրա համար, առաջին հերթին, թույլ տվեք ասել, ունեմ բարոյական լիարժեք ու չխաթարված իրավունք. հիմնականում կատարել եմ նախընտրական խոստումներս, ապահովել եմ համայնքի քառամյա զարգացման ծրագրի կատարումը (ինչն արտացոլված է բնակչությանը ներկայացված հաշվետվությանս մեջ), անկեղծ ու ազնիվ եմ եղել իմ քաղաքի, իմ ընտրողների հանդեպ, չեմ չարաշահել մարդկանց վստահությունը, բարձր եմ պահել տեղական ինքնակառավարման մարմնի պատիվը եւ կապանցու արժանապատվությունը, համայնքում (նաեւ քաղաքապետարանի ակտիվ դերակատարությամբ) ապահովվել է համերաշխության, հանդուրժողականության մթնոլորտ, քաղաքապետարանը չի հայտնվել աղմկահարույց որեւէ պատմության մեջ, պետական շահը, համայնքի շահը, մարդկանց իրավունքները մշտապես եղել են տեղական իշխանության գործունեության առանցքում:

Սկզբունքային նշանակություն եմ տվել ու տալիս համայնքի բնակչության մեջ իշխող տրամադրություններին, քաղաքացիների դիրքորոշմանը: Իսկ հազարավոր կապանցիներ անկեղծորեն հավանություն են տալիս իմ գործունեությանը, գործելակերպին, նորից սատարելու պատրաստակամություն հայտնում, վերընտրվելու պահանջ ներկայացնում: Եվ դա կապանցի ընտրողի մի ստվար մասի հստակ, որեւէ պայմանականությամբ չպարուրված դիրքորոշումն է: Մարդիկ պահանջում են 2008-ին ընտրված ճանապարհի, որդեգրած քաղաքականության շարունակություն:

Իմ թեկնածության օգտին արտահայտվել են (եւ շարունակում են արտահայտվել) երկրի մի քանի ազդեցիկ քաղաքական ուժեր ու հասարակական կազմակերպություններ, մտավորականության ներկայացուցիչներ: Անգամ իշխող կուսակցությունը, որ քաղաքապետի այլընտրանքային թեկնածու է առաջադրել, իր բազմաթիվ ներկայացուցիչների միջոցով քանիցս բարձր է գնահատել իմ գործունեությունը քաղաքապետի պաշտոնում:


Շարունակությունը՝ էջ 2


**ՀԱՄԱՐԻ ՆՅՈՒԹԵՐԸ ՏՐԱՄԱԴՐԵԼ Է ԿԱՊԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՐՏՈՒՐ ԱԹԱՅԱՆԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՇՏԱԲԸ:**

Խոսք ընտրողին



Լուսանկարը՝ Մելիք Բաղդասարյանի

# Կապանցիների հետ՝ հանուն արժանապատիվ Կապանի

**Սկիզբը՝ էջ 1**

Այսօր էլ այդ կուսակցության հեղինակավոր շատ դեմքեր (և՛ Կապանից, և՛ մայրաքաղաքից) իրենց զորակցությունն են հայտնում ինձ եւ աջակցության վճռական քայլեր անում:

Այնուհետեւ, թող անհամեստ չհնչի, իմ մեջ տեսնում եմ որոշակի ուժ եւ կամք, որոնք թույլ կտան առաջիկա ընտրաշրջանում եւս արդյունավետ ղեկավարել Կապան համայնքը:

Ու տարիների փորձս, գիտելիքներս, քաղաքի հիմնախնդիրների լուծման վերաբերյալ հստակ պատկերացումներս կծառայեցնեմ գործին:

Լինելով ՀՅԴ անդամ՝ ես, այնուամենայնիվ, դրսեւորել եմ ու կդրսեւորեմ վերկուսակցական պահվածք, քանի որ առաջնորդվում եմ քաղաքի ընդհանրական շահով, քանի որ քաղաքապետարանը, ինչպես նշել եմ, յուրաքանչյուրիդ հավատի եւ վստահության դուռն է, յուրաքանչյուրիդ հուսատեղին: Համայնքի ամեն մի բնակչի համարել եմ իմ դաշնակիցն ու գործընկերը՝ անկախ նրանց՝ իմ հանդեպ ունեցած վերաբերմունքից: Լիազորություններիս սահմաններում ձգտել եմ նեցուկ լինել յուրաքանչյուրին, հասանելի լինել ամենքին, որեւէ մեկին երբեք ցավ չպատճառել: Ձգտել եմ համայնքին տալ ունեցածս: Քննադատությանը չարությամբ չեմ վերաբերվել, ամեն մի դիտողությունից փորձել եմ դասեր քաղել: Համայնքային կյանքի ոչ մի ոլորտ, եթե նույնիսկ չեմ կարողացել բարձրացնել, չեմ էլ ձախողել: Մարդկանց դրական ձեռնարկումներին, եթե նույնիսկ չեմ կարողացել նպաստել, ապա չեմ էլ խոչընդոտել: Երբեք չեմ խուսափել ժամանակի սուր հարցերից ու պատասխանատվությունից: Ամեն գնով ձգտել եմ խոսքս գործ դարձնել, իսկ եթե ինչ-որ բան չի ստացվել, ապա դա հաջորդ օրվա անելիքներիս մեջ եմ թողել:

Իմ որոշման հիմքում կա եւս մեկ վստահություն ներշնչող հանգամանք: Այսօր առկա է քաղաքապետի, նրա աշխատակազմի արդյունավետ համագործակցությունը և՛ կառավարության ու մարզպետարանի, և՛ քաղաքական ու հասարակական կազմակերպությունների, և՛ տնտեսվարող սուբյեկտների ու գործարար աշխարհի, նաեւ մայրաքաղաքում ու արտերկրում բնակվող կապանցիների հետ: Այդ ամենը, համոզված եմ, Կապանի առջեւ ծառացած խնդիրները լուծելու հավելյալ գործոն է:

Ինչպես նշել եմ նախորդ ընտրության շեմին, ես գալիս եմ աշխատելու ստույգ վճռականությամբ, իմ գիտելիքները, կարողություններն ու փորձը Կապանին ծառայացնելու մտադրությամբ, հանուն քաղաքի բարգավաճման ու Կապանի առջեւ ծառացած խնդիրների լուծման: Ես գալիս եմ ամեն մի կապանցու մեջ արթնացնելու պատասխանատվության զգացում, տիրոջ զգացում հայրենի ոստանի՝ Կապանի հանդեպ:

Ընդհանրապես մեծագույն հարգանքով եմ վերաբերվում պետական բոլոր կառույցների, բոլոր պաշտոնյաների կարծիքներին ու դիրքորոշմանը, բայց անթույլատրելի ու անբնական եմ համարում նրանց միջամտությունը Կապանի քաղաքապետի ընտրությանը, ինչի առանձին դրսեւորումներին արդեն իսկ ականատես ենք: Նման երեւույթը մեծագույն վիրավորանք է կապանցուն, Կապանի արժանապատվությանը: Շատ վիրավորական է, երբ 21-րդ դար թեւակոխած Կապանի, մարզկենտրոն Կապանի, Սյունիքի թագավորության երբեմնի մայրաքաղաք Կապանի քաղաքապետ են ուզում դառնալ ինչ-որ հովանավորների (հաճախ Կապանի իրական շահերի հետ աղերս չունեցող) մատուցմամբ ու նվիրաբերմամբ: Եվ շատ զավեշտական է (եթե ոչ ողբերգական), որ Կապանի քաղաքապետի պաշտոնը սկուտեղի վրա ստանալ ակնկալող անձնավորությունն իրեն թույլ է տալիս ինչ-ինչ նախադասություններ արտաբերել Կապանի արժանապատվության, քաղաքապետարանի արած-չարածի, բարոյահոգեբանական՝ իր պատկերացմամբ անառողջ մթնոլորտի ու խախտված ազատությունների մասին: Մինչդեռ, Կապանի քաղաքապետը ոչ մի պարագայում չպետք է դրածո լինի եւ պետք է ընտրվի բացառապես կապանցիների կամքով: Եվ սեպտեմբերի 9-ը քննության օր է լինելու հազարամյակի խորքից եկող Կապանի եւ բոլոր այն կապանցիների համար, ում համար թանկ է մեր բնօրրանի արժանապատվությունը:

Անձամբ ես իմ հույսը կապում եմ կապանցի ընտրողի հետ: Ինչպես 2008-ին, ընտրության եմ գնում կապանցիների հետ՝ հանուն արժանապատիվ Կապանի: Ինչպես 2008-ին, ուզում եմ ընտրվել եւ ոչ թե նշանակվել: Ուզում եմ նաեւ մի բացարձակ եւ անքննելի ճշմարտություն հիշեցնել՝ նշանակված (ասել է թե՝ դրածո) քաղաքապետը չի կարող (եթե անգամ կամենա) ծառայել Կապանին, նշանակված քաղաքապետը ոչ միայն իր անձը, այլեւ ամբողջ համայնքը պետք է ծառայեցնի իրեն նշանակողներին ու հովանավորներին: Մյուս կողմից՝ իմ ընտրողներին ապշեցնում է ոմանց՝ անցյալին վերադառնալու ձգտումը, ինչը նույնպես անթույլատրելի եմ համարում:

Սիրելի՛ հայրենակից,

Վերը շարադրված հանգամանքները հաշվի առնելով՝ կրկին ծառայությունս եմ առաջարկում ձեզ ու յուրաքանչյուրիդ վստահությունն ու աջակցությունը հայցում:

Վստահեք, եւ կարդարացնեմ ձեր հույսերը: Հավատացեք, որ կկարողանամ Կապանն առաջիկա չորս տարում առաջնորդել զարգացման ճանապարհով, ձեզ համար հուսալի եւ ցանկալի ուղիով: Իսկ վստահելու օրը, ինչպես նշեցի, սեպտեմբերի 9-ն է:

Բարի ընտրություն բոլորիս:

**Հարգանքով՝ ԱՐՏՈՒՐ ԱԹԱՅԱՆ**

# ԱՐՏՈՒՐ ԱԹԱՅԱՆ. «Խորհուրդ չէի տա, որ որեւէ մեկը խաղար Կապանի արժանապատվության հետ»

**Կապանի գործող քաղաքապետ Արտուր Աթայանը, ով այդ պաշտոնում վերընտրվելու համար իր թեկնածությունն է առաջադրել, ընտրողներին է ներկայացրել մի շարք փաստաթղթեր (անցած չորս տարում կատարած աշխատանքների մասին հաշվետվություն, նախընտրական ծրագրի հիմնադրույթներ, ընտրողներին ուղղված խոսք՝ առաջադրման մոտիվներն արտահայտող), որոնք նրա գործունեության, կրկին առաջադրվելու շարժառիթների, ծրագրերի, քաղաքի առջեւ ծառացած հիմնախնդիրների լուծման ուղիների մասին բավականին տեղեկատվություն են պարունակում: Այդ բոլորով հանդերձ, սակայն, կան հարցեր, որոնց պատասխանը կուզենայինք իմանալ, ինչի համար եւ զրույցի հրավիրեցինք Արտուր Աթայանին:**



Լուսանկարը՝ Մելիք Բաղդասարյանի

**– Պարո՛ն Աթայան, Դուք Կապանի քաղաքապետ վերընտրվելու հայտ եք ներկայացրել ինքնաառաջադրմամբ եւ ոչ թե ՀՅԴ-ի որոշմամբ, որի վաղեմի անդամն եք: Ինչո՞ւ ինքնաառաջադրում:**

– Միշտ էլ այն կարծիքին եմ եղել, որ ՏԻՄ ընտրություններում (հատկապես Կապանի պարագայում) գործընթացի կուսակցականացումը համայնքի շահերին համահունչ չէ: Կապանին հարկավոր է առաջնորդ (անցած չորս տարին դրա լավագույն վկայությունն է), ով կունենա վերկուսակցական պահվածք եւ գործունեության ընթացքում երբեք չի ղեկավարվի որեւէ կոնկրետ կուսակցության, որեւէ կլանի շահերով: Կապանի քաղաքապետը բոլոր կապանցիների առաջնորդն է՝ անկախ կուսակցական պատկանելությունից, անկախ այն բանից, թե իրեն որքանով են համակրում կամ մերժում: Այդ պատճառով էլ ինքնաառաջադրվել եմ: Այդ հանգամանքն է, որ թույլ է տալիս հայտարարել՝ եղել եմ ու կլինեմ բոլոր կապանցիների քաղաքապետը, արտահայտել եւ կարտահայտեմ բոլորի ձգտումները: Կուսակցական շահից վեր կա մեկ այլ՝ Կապանի շահը, երկրի ու ազգի շահը, որով առաջնորդվել ու առաջնորդվում եմ:

**– Այսինքն՝ Ձեր եւ հարազատ կուսակցության միջեւ առկա լարված հարաբերությունների մասին խոսակցությունը, որ սկիզբ էր առել ԱԺ մայիսյան ընտրությունների նախօրեին, չափազանցվա՞ծ է: Կարելի՞ է ասել, որ ՀՅԴ-ն նախկին ջերմեռանդությամբ պաշտպանում է իր անդամի՝ վերընտրվելուն միտված գործունեությունը:**

– Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ հանդիպել եմ կուսակցական ընկերներիս հետ, ներկայացրել դիրքորոշումս, եւ պետք է ասել, որ բոլորն էլ ճիշտ են հասկացել ինձ: Իմ պահվածքը որակվել է որպես Կապանի համայնքային շահերից բխող պահվածք: Եվ ուրախ եմ, որ կուսակցական ընկերներիս հետ որեւէ խնդիր չունեմ: Օրերս տեղի ունեցավ ՀՅԴ Կապանի կազմակերպության ընդհանուր ժողովը, որտեղ քննարկվեց Կապանի քաղաքապետի առաջիկա ընտրության հարցը: Կազմակերպությունը հավանություն տվեց նախորդ չորս տարվա գործունեությանս եւ պատրաստակամություն հայտնեց՝ հնարավոր ամեն ինչով սատարել իմ ընտրությանը: Այնպես որ կուսակցության հետ ունեցած խնդիրների մասին խոսակցություններն ասեկոսեների շարքից են եւ չպետք է լուրջ ընդունել:

**– Կապանում, հատկապես վերջին**

Շարունակությունը՝ էջ 4

## ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ ■ ԱՐՏՈՒՐ ԱԹԱՅԱՆ

Ծնվել է 1964թ. ապրիլի 6-ին Կապան քաղաքում: 1981թ. ավարտել է Կապանի N2 միջնակարգ դպրոցը: 1982-1984թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1984 թվականից աշխատանքի է անցել Կապանի «էլեկտրոն» գործարանում: 1988 թվականից ակտիվորեն մասնակցել է ազգային զարթոնքին, հետագայում ներգրավվել ՀՀ սահմանների պաշտպանության կազմակերպման, ինքնապաշտպանական ջոկատների ձեւավորման, սպառազինման ու հանդերձավորման գործին: 1991 թվականից ՀՅԴ անդամ է, նույն թվականից՝ ՀՅԴ ԿԿ գործիչն էր Սյունիքում, 1996 թվականից՝ ՀՅԴ «Լեռնահայաստան» մարզային կոմիտեի անդամ: 1995 թվականին քաղաքացիական նախաձեռնությամբ առաջադրվել է ՀՀ Ազգային ժողովի պատգամավորության թեկնածու: 2002 թվականին որպես գործարար հիմնել է «Վայբլ» ՍՊ ընկերությունը, որի տնօրենն էր մինչեւ 2008թ. նոյեմբեր ամիսը: Ակտիվորեն զբաղվել է հասարակական գործունեությամբ, բազմաթիվ բարեգործությունների հեղինակ է, մասնավորապես սոցիալական ու մշակութային ոլորտներում: «Սյունյաց տուն» ազգային-մշակութային ընկերության հիմնադիր անդամ է: ՀՀ առեւտրաարդյունաբերական պալատի խորհրդի անդամ է, եղել է պալատի Սյունիքի մասնաճյուղի խորհրդի նախագահ: Համագործակցել է միջազգային կազմակերպությունների հետ:

2002 թվականից նախաձեռնել ու նպաստել է «Կապան-Գլենդել քույր քաղաքների ընկերակցության» հիմնադրմանը:

2008թ. հոկտեմբերի 12-ին ընտրվել է Կապանի քաղաքապետ. առաջադրվել էր քաղաքացիական նախաձեռնությամբ:

2008թ. նոյեմբերի 11-ին ընտրվել է «Կապան» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ:

Ունի ֆինանսիստ-տնտեսագետի բարձրագույն կրթություն (2006թ. ավարտել է Երեւանի կիրառական բիոտեխնոլոգիայի ինստիտուտի տնտեսագիտական ֆակուլտետը):

Ամուսնացած է, ունի երկու որդի եւ մեկ դուստր:

■

## ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ ԱՆՎԱՆԻ ԿԱՊԱՆՑԻՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ



Արամ Մանուկյանի կիսանդրին՝ քաղաքի կենտրոնում (2009թ.)



Մանկապատանեկան մարզադպրոցը՝ Դավիթ Համբարձումյանի անվամբ (2009թ.)



Կանգնեցվեց Սարգիս Վարդանյանի հուշարձանը (2012թ.)



Նշվեց Ռաֆիկ Մինասյանի 85-ամյակը (2011թ.)



Նշվեց Սմբատ Մելիք-Ստեփանյանի 130-ամյակը (2009թ.)

Հարցազրույց համարին

# ԱՐՏՈՒՐ ԱԹԱՅԱՆ. «Խորհուրդ չէի տա, որ որեւէ մեկը խաղար Կապանի արժանապատվության հետ»

Սկիզբը՝ էջ 3

**օրերին, համառորեն տեղեկություններ են շրջանառվում առ այն, թե իբր ՀՀԿ-ի բարձրաստիճան ներկայացուցիչները եւ նրանց կամակատարները Ձեզ ինքնաբացարկի պահանջ են ներկայացրել՝ համոզված լինելով, որ ներկա ընտրապայքարում հնարավոր չէ քաղաքակիրթ եղանակով Ձեզ պարտության մատնել, իսկ Դուք մերժել եք նրանց եւ ընտրապայքարը շարունակելու վճռականություն հայտնել:**

– Իրոք որ նման պահանջ եղել է, եւ ես, առանց երկմտանքի, մերժել եմ նրանց: Մի բան այսօր արդեն կարելի է ստույգ ասել. այդ մարդիկ չեն պատկերացնում Կապանում ստեղծված վիճակը, այդ մարդիկ չեն ուզում հարգել կապանցու՝ ընտրելու եւ ընտրվելու սահմանադրական, աստվածատուր իրավունքը: Նրանք ուզում են Կապանը ծառայեցնել իրենց անձնական շահերին ու անձնական ծրագրերին: Այս պարագայում ամենատարօրինակն ու մեր պետության համար վիրավորականն այն է, որ այդ մարդիկ անընդհատ վկայակոչում են հանրապետության նախագահի՝ իբր հայտնած դիրքորոշումը, ինչը, սակայն, իրականության հետ ոչ մի կապ չունի:

**– ՀՀԿ-ի իշխանավոր ղեկավարները, որ քաղաքապետի համար ինչ-որ իմաստով վերադաս են, Ձեր անցած չորս տարվա աշխատանքը քանիցս բարձր են գնահատել, անգամ կառավարական պարգեւի ներկայացրել Ձեզ: Ինչպե՞ս եղավ, որ գնահատանքի ու գոհության նման հանդեսներից հետո ՀՀԿ-ն Ձեզ սեպտեմբերի 9-ի ընտրություններում այլընտրանք առաջարկեց:**

– Ընդամենը սխալ եւ պարզունակ հաշվարկի արդյունքն է՝ պայմանավորված նախագահական առաջիկա ընտրությունով: Համայնքում իշխանափոխություն իրականացնելով՝ ուզում են իբր նպաստավոր պայմաններ ստեղծել այստեղ: Բայց իրենց թեկնածուն, այդ դեպքում, պետք է գոնե մի փոքր ընտրազանգված ունենա... Մյուս կողմից՝ ոմանք փորձում են Կապանի քաղաքապետարանը եւս դիմազրկել, վերածել իրենց հնազանդ, իրենց սպասարկող մի գրասենյակի, ինչը, վստահ եմ, կապանցին թույլ չի տա:

**– ՀՀԿ-ն իշխող կուսակցություն է, եւ գործադիրի լծակները գրեթե ամբողջապես կենտրոնացված են նրա ձեռքում: Արդյո՞ք վարչական ռեսուրս կոչված գործոնի ազդեցությունը Դուք նկատում եք նախընտրական այս օրերին, թե՞ վարչական ռեսուրս կոչվածի դերը չպետք է գերագնահատել ու դիտարկել իբրեւ միաձույլ, համախումբ ուժ:**

– Նախ՝ Դուք ճիշտ ակնարկեցիք, որ գերագնահատված, չափազանցված են այդ գործոնի դերն ու նշանակությունը, շատ վաղուց վարչական ռեսուրս ասվածը միասնությունից զուրկ, վիրտուալ հասկացություն է: Վարչական եւ բյուջետային աշխատողներից շատերը հիմա ինձ իրենց աջակցությունն են հայտնում: Ոմանք նույնիսկ բարձրաձայնում են իրենց հիասթափության մասին եւ պարզագույն հարցեր առաջադրում. «Մի՞թե կարելի է անընդհատ մեզ ստորացնել եւ ամեն ընտրությունից առաջ պահանջ ներկայացնել, քանի՞ անգամ կարելի է վախեցնելով մեր անձնագրերը վերցնել, միեւնույն է՝ մենք ազատ ենք լինելու քվեարկության ժամանակ»: Եվ տպավորություն ունեմ, որ Կապանի քաղաքապետի ընտրության ժամանակ որոշիչը կուսակցականությունը չի լինելու, վարչական ռեսուրս ասվածը չի լինելու: Կապանում, ինչպես տեսնում եմ, մարդ լինելու, քաղաքացի լինելու, արժանապատիվ կապանցի լինելու գործոններն են գերակայելու, եւ արդեն իսկ գերակայում են:

**– Որոշ մանր բյուջետայիններ (այնուամենայնիվ), ովքեր վերջին տարիներին իբր բարյացակամ են եղել Ձեր հանդեպ, որոնց քանիցս ընդառաջել եք եւ տարբեր կարգի օգնություններ ցույց տվել, հիմա, կարծեք, խույս են տալիս Ձեր նախընտրական շտաբերից եւ ձգտում ավելի մոտ կանգնել Ձեր հիմնական մրցակցի թիմին:**

– Ես դա տեսնում եմ, բայց չեմ անհանգստանում: Ես անկեղծորեն խղճում եմ այդ մարդկանց, բայց եւ հասկանում եմ նրանց կարգավիճակը: Հնարավոր չէ, որ նրանք անկեղծորեն գնան եւ կանգնեն՝ այն էլ իմ մրցակցի կողքին: Նրանք սովորական գոյապահպանության, ինքնապաշտպանության հարց են լուծում: Վստահ եմ, որ նույն այդ մարդիկ առաջինն են «ոչ» ասելու մրցակցիս: Վստահ եմ, որ նրանք ավելի շատ են հիասթափված իրենց իսկ անպաշտպան կարգավիճակից, եւ քվեախցիկում առաջնորդվելու են սեփական խղճով ու համոզմունքներով:

**– Փաստորեն ՀՀԿ-ն Սիսիանում դիրքերը կորցրել է, Քաջարանում եւ Ագարակում ստեղծել է ոչ մրցակցային իրավիճակ, Մեղրիում միմյանց դեմ է հանել երկու Հանրապետականի՝ անկուսակցական թեկնածուի ճամփան փակելու համար, իսկ Կապանում... Կապանը, կարծեք, ՀՀԿ-ի, գործող իշխանությունների կողմից հայտարարվել է գլխավոր ճակատ: Ըստ էության մարտադաշտում դեմ դիմաց երկու ուժ է կանգնած՝ մեկն իշխանական ամբողջ մեքենան է՝ ՀՀԿ-ի գլխավորությամբ, մյուսը Դուք եք: Ձեզ չի՞ վախեցնում այս իրավիճակը:**

– Ձնայած ճիշտ է Ձեր ձեւակերպումը, բայց թույլ տվեք մի շտկում անել՝ իշխանական համակարգին դեմ դիմաց կանգնած է ոչ թե Արտուր Աթայանը, այլ արժանապատիվ Կապանը՝ ամբողջությամբ: Եթե զգայի, որ կապանցին ինձ հետ չէ ու անկեղծորեն ինձ չի սատարում, որ իմ թեկնածությունը պահանջված չէ, հետ կկանգնեի ընտրապայքարից: Տեսնում եմ, որ ողջամիտ Կապանը հիմնականում մի բեւեռի շուրջ է հավաքվում, եւ ես իրավունք չունեմ նրանց հետ չլինել, նրանց առաջնորդը չլինել: Ըստ էության կշեռքի նժարին կապանցու արժանապատվությունն է դրված, եւ մարդիկ մի բան են պահանջում՝ ոչ ոք չպետք է միջամտի ընտրական գործընթացներին, Կապանի քաղաքապետին պիտի կապանցին ընտրի՝ ազատ, անկաշկանդ ընտրությամբ:

**– Վերջին մեկ-երկու ամսում ե՛ւ Դուք, ե՛ւ Ձեր մրցակիցները բավականին շատ ելույթներ ունեցաք մայրաքաղաքային թերթերում: Հետաքրքիր մի երեւույթ նկատեցինք թերթային այդ պոլեմիկայում. երբ նրանց հարցնում են Ձեր մասին, որեւէ դրական խոսք չեն ասում եւ ավելի շատ խուսափում են Ձեր մասին խոսել, իսկ Դուք նրանց մասին կոռեկտ եք արտահայտվում, երբեմն՝ նույնիսկ գովաբանում: Ինչպե՞ս հասկանալ մոտեցումների այդ տարբերությունը:**

– Ասել եւ ասում եմ՝ կողմ եմ հանդուրժողականության, փոխադարձ հարգանքի, քաղաքակիրթ ընտրա-

## Իշխանության բոլոր օղակների ու տնտեսվարողների հետ ■ ՍԵՐՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գեւորգյանի հերթական հանդիպումը Կապանի քաղաքապետ Արտուր Աթայանի հետ:
2. Կապանի տարածաշրջանի հոգեւոր հովիվ Տեր Գալուստ վարդապետ Դարբինյանը մշտապես զգացել է քաղաքապետի աջակցությունը տարածաշրջանի հոգեւոր խնդիրների լուծման գործում:
3. 1 սեպտեմբերի 2009թ., ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի մասնակցությամբ վերաբացվում է քաղաքի N3 դպրոցը՝ հիմնանորոգված մոսկվայաբնակ կապանցի, բարերար Սերգեյ Համբարձումյանի կողմից:
4. «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲ ընկերության սեփականատեր «Դանդի փրիշս մեթլզ» ընկերության նախագահ Ջոնաթան Գուդմանի հետ մշտական առնչությունների շնորհիվ ապահովվել է քաղաքապետարանի եւ քաղաքի գլխավոր գործատուի համագործակցությունը:
5. Ա. Աթայանը «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲ ընկերության սեփականատեր «Դանդի փրիշս մեթլզ» ընկերության արտադրության հարցերով փոխտնօրեն Ռիք Հաուսի հետ:
6. Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի եւ ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալ Վաչե Տերտերյանի հետ «Կապանյան օրեր» ավանդական տոնակատարության ժամանակ (2011թ.):
7. Կինովավերագրող, լրագրող Ցվետանա Պասկալեւան, ով 2012թ. հունիսին գտնվում էր Կապանում, ջերմ ընդունելության արժանացավ Կապանի քաղաքապետարանում:

1


2


3


## Հարցազրույց համարին

## ԽՈՍՔ ԵՎ ԳՈՐԾ ■ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ՝ ՈԳԵՇՆՉՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ

պայքարի ու քարոզարշավի: Այդ սկզբունքներով էլ առաջնորդվում եմ:

Մյուս կողմից՝ նրանք իմ համաքաղաքացիներն են, ես նրանց քաղաքապետն եմ ու պարտավոր եմ բոլոր դեպքերում ներողամիտ լինել, նրանց չիկացած հույզերին նույն ձեւով չպատասխանել, նրանց՝ բազմաթիվ հարցերում անտեղյակությանն ու չարացածությանն ըմբռնումով մոտենալ:

**– Ձեր հաշվետվությանը ծանոթանալուց հետո երիցս համոզվեցինք, որ քաղաքապետարանն անցած չորս տարում շոշափելի աշխատանք է կատարել համայնքում: Որքան էլ տարօրինակ է, Ձեր աշխատակազմը (միգուցեեւ դա Ձեր համեստությունից է բխում) ըստ պատշաճի հանրությանը չի ներկայացրել կատարվածը: Քաղաքապետարանի կայքի վերջին տեղեկատվությունը (մի քանի օր առաջ նկատեցինք) ոչինչ չասող մի լուր էր՝ հունիս ամսին առնչվող: Եվ ահա Ձեր մրցակիցը թերթերից մեկում հայտնում է, որ անցած չորս տարում Կապանում որեւէ դրական փոփոխություն չի եղել: Սովորական կուրությո՞ւն, թե՞ լավը տեսնել չկարողանալու ցանկություն:**

– Ճիշտն ասած, երբեք ուշադրություն չեմ դարձրել կատարվածը քարոզելուն, փառաբանելուն, ներկայացնելուն, ես զբաղվել եմ իմ ամենօրյա աշխատանքով, իմ գործն եմ արել: Առհասարակ, կողմ չեմ շոուներին, թեեւ կարծում եմ, որ քաղաքապետարանի գործունեությունը, կատարված աշխատանքը պետք է պարբերաբար եւ հավուր պատշաճի ներկայացվեն համայնքի բնակիչներին: Մյուս կողմից՝ մարդիկ տեսնում են ե՛ւ կատարվածը, ե՛ւ բացթողումը: Գրեթե ամեն օր շփվում եմ մարդկանց հետ, չմիջնորդավորված կապ է եղել ու կա ժողովրդի հետ: Այսինքն՝ Կապանով ապրող, համայնքային կյանքով հետաքրքրվող յուրաքանչյուր մարդ գիտի, թե վերջին տարիներին որքան աշխատանքներ են կատարվել քաղաքում: Իսկ Ձեր հիշատակած հայտարարությունը, որ արվել էր մրցակցիս կողմից, ընդամենը

Շարունակությունը՝ էջ 6



2011թ., Արտուր Աթայանը «Կապան» ոսկե հուշամեդալ է հանձնում Արցախյան գոյամարտի ակտիվ մասնակից Արարատ Մանուչարյանին:



Արտուր Աթայանը Բաղաբուրջի հուշահամալիրում:












Սյունյաց երկիր
www.syuniacyerkir.am

ԵՐԵՔՇԱԲԹԻ • 28 ՕԳՈՍՏՈՍԻ 2012Թ • № 21 (262)



# ԱՐՏՈՒՐ ԱԹԱՅԱՆ. «Խորհուրդ չէի փա, որ որեւէ մեկը խաղար Կապանի արժանապատվության հետ»

Սկիզբը՝ էջ 5

մարդկանց զվարճանալու հաճելի առիթ տվեց: Իմ ընկերները, ինչպես եւ ես, ներողամիտ են: Լավ, եթե մարդը տեսնելու ունակ չէ, եթե մարդը տարիներով ապրել է քաղաքում, բայց չի հաղորդվել իր քաղաքի ընթացքին, ինչո՞ւ նեղանալ կամ մեղադրել:

**– Վերջերս Հանրապետականի որոշ ներկայացուցիչներ իրենց ելույթներում պնդում են. եթե երկրում իշխող քաղաքական ուժը ՀՀԿ-ն է, ապա ամեն մի համայնքի համար շահեկան է ՀՀԿ-ական ղեկավար ունենալ: Իբր նման պարագայում տվյալ քաղաքապետը կամ գյուղապետը գործադիրի միջոցով ավելի շատ նպաստ կբերի համայնքին: Ձեր կարծիքը:**

– Նայեք Ձեր չորս կողմը եւ այնքա՜ն ձախողված ՀՀԿ-ական համայնքապետեր կտեսնեք: Այնքա՜ն համայնքներ ունենք, որ Հանրապետական ղեկավար ունի, բայց որեւէ նորմալ գործ նախորդ տարիներին չի կատարվել այնտեղ: Իմ օրինակով ասեմ՝ անցած չորս տարում ե՛ւ մարզի ղեկավարության, ե՛ւ կառավարության պատասխանատուների կողմից նման միտում չեմ տեսել: Յուրաքանչյուր հարց, որ հիմնավոր ձեւով բարձրացրել եմ, արժանացել է լրջագույն ուշադրության, որեւէ հարց անպատասխան չի մնացել: Մնացյալը քարոզչական անհաջող հնարք է՝ այդ հորինվածքի հեղինակներին վարկաբեկող:

**– Ինչպե՞ս եք գնահատում Ձեր հնարավորությունը մարդկային ռեսուրսի առումով: Ի վերջո, բոլոր տեղամասային ընտրական հանձնաժողովներում պետք է հավատարիմ գաղափարակիցներ ու զինակիցներ ունենաք, Ձեր կողմնակիցները պետք է իրավիճակին տիրապետեն նաեւ ընտրատեղամասերի մերձակայքում, եւ պիտի կարողանաք տեր կանգնել տրված քվեներին:**

– Ասեմ, որ ընտրություններին մասնակցելու տարիների փորձ ունեմ, եւ ամեն մի մանրուք հաշվի ենք առնում: Ասեմ նաեւ, որ հանձնաժողովներում բավականին ամուր դիրք ունեմ: Գործնական եւ արդյունավետ ընթացքի մեջ են շտաբային աշխատանքները: Բավականին հզոր թիմ է հավաքվել, նույնիսկ չորս տարի առաջ՝ 2008-ի ՏԻՄ ընտրություններին, այսպիսի թիմ չենք ունեցել: Մեզ հետ են բոլոր նրանք, ովքեր դեմ են ստրկությանն ու ստրկամտությանը, մեզ հետ են, ինչպես նշել եմ, արժանապատիվ Կապանի կողմնակիցները: Մենք ի վիճակի ենք տեր կանգնելու մեր քվեներին եւ համարժեք պատասխան տալու բոլոր նրանց (անկախ դեմքից ու դիրքից), ովքեր կփորձեն ընտրողի հետ այլ լեզվով խոսել:

**– Դուք նաեւ դրական փորձ եք կուտակել ավագանու հետ համատեղ աշխատանքում: Ենթադրում ենք, որ Ձեզ համար միեւնույն չէ, թե ովքեր կընտրվեն համայնքի ավագանու կազմում: Հետաքրքիր է՝ Ձեր կողմնակիցներից ավագանու անդամի թեկնածուներ առաջադրել ե՞ք, թե՞ ամեն ինչ թողել եք ընտրողի հայեցողությանը:**

– 15 տեղ ունեցող ավագանու անդամ դառնալու համար հավակնում է 56 հոգի: Դա շատ ուշագրավ փաստ է: Դա նաեւ նշանակում է, որ անցած տարիներին թափանցիկ ենք աշխատել, որ ավագանին իր բարձրության վրա է գտնվել: Ավելի լավ, ավելի գործող ավագանի (թող անհամեստի տպավորություն չթողնեմ), քան Կապանինն է, մարզում չգիտեմ: Այլապես՝ մարդկանց այսչափ չէր հրապուրի ավագանու անդամ դառնալու գաղափարը: Ավագանու անդամների ընտրությանը խառնվելն իմ ծրագրերի մեջ չի մտնում, կոռեկտ չէր լինի որեւէ միջամտություն եւ առանձին թեկնածուների հանդեպ համակրանք կամ հակակրանք արտահայտելը: Ես պատրաստ եմ աշխատել նրանց հետ, ում կընտրի, ում կվստահի ժողովուրդը:

**– Ձեր քառամյա արդյունավետ գործունեության մասին, ինչպես արդեն նշեցինք, տեղյակ ենք: Այդուհանդերձ, ի՞նչը Ձեզ չի հաջողվել:**

– Համայնքային կյանքում չկա մի ոլորտ, որտեղ որեւէ խնդիր լուծած չլինենք, դա անվիճելի իրողություն է: Բայց եւ կան մի քանի հիմնախնդիրներ՝ լուրջ ներդրում պահանջող, որ չի հաջողվել լուծել. ներհամայնքային ճանապարհների ու հատկապես թաղամասերի ճանապարհների ամբողջական բարեկարգում (թեեւ Կավարտի, Բաղաբուրջի, Վաչագանի ճանապարհները պատշաճ տեսքի են բերվել), բազմաբնակարան շենքերի նորմալ պահպանության ապահովում (հատկապես տանիքների եւ վերելակների հիմնանորոգում ու արդիականացում)… Ճիշտ է, մենք բավականին հավելյալ միջոցներ ներգրավեցինք քաղաքի հիմնախնդիրների լուծման գործում, բայց դա հեռու է բավարար լինելուց, քանի որ համայնքի առջեւ, նաեւ անցած տարիներից ժառանգած, լուրջ հիմնախնդիրներ են ծառացած:

**– Մի քանի օր առաջ (15 օգոստոսի 2012թ.) «Սյունյաց երկիր» թերթում «Կապանի ՃՇՇ» ՍՊԸ-ի տնօրեն Արարատ Կարապետյանն այսպիսի հայտարարություն արեց. «Կապանը շատ է հետ ընկել, Կապանին հզոր ձեռք է պետք, որը չեմ տեսնում»: Ինչպե՞ս եք վերաբերում այդ հայտարարությանը. չէ՞ որ մի տեսակ թերահավատություն կա առաջադրված թեկնածուների հանդեպ:**

– Արարատ Կարապետյանի հայտարարությունը Կապանը սիրող, Կապանի հոգսերով ապրող մարդու բնական ճիչ է: Տարիների ընթացքում այնքա՜ն խնդիրներ են կուտակվել մեզանում, որ համայնքային բյուջեով դրանց լուծման մասին երազելն անգամ անիմաստ է: Այո՛, պետք են համատեղ ջանքեր, պետք են միջազգային նոր դոնորներ, պետք են խոշոր տնտեսվարողների ավելի ակտիվ ու մեծածավալ ներդրումներ: Այդ հարցը, ինչպես անցած չորս տարում, այնպես էլ այսօր, քաղաքապետարանի առաջնահերթություններից է: Բայց ես ռեալիստ եմ եւ չեմ մոռանում, որ քաղաքականությունը հնարավորի արվեստ է…

**– Մենք ընտրական ներկա գործընթացի մանրամասների մեջ չխորացանք, բայց եւ չենք կարող երկու իրողություն շրջանցել: Նախ՝ հանրապետության մի քանի համայնքներում կրկին մտահոգություն են արտահայտում ընտրացուցակների հերթական ուռճացման կապակցությամբ: Ե՛վ որպես համայնքի ղեկավար, ե՛ւ որպես համայնքի ղեկավարի թեկնածու՝ ի՞նչ եք ձեռնարկում, որ ընտրացուցակներն առավելագույնս հավաստի լինեն ու մաքուր: Երկրորդ, ըստ քաղաքում շրջանառվող լուրերի՝ Ձեր մրցակցի նախընտրական շտաբն արդեն իսկ ընտրողների անձնագրերն է հավաքում, որքա-**






ՆՈՐ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԺԱՄԱՆՑԻ ՀԱՄԱՐ

ԽՈՍՔ ԵՎ ԳՈՐԾ

■ ԽՈՍՔ ԵՎ ԳՈՐԾ

## ԿԱՊԱՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵՑ ՄՆԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՇԱՆԱՎՈՐ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻՑ ՄԵԿԸ


Լուսանկարը՝ Հայկ Բաղդասարյանի

**Վաստակավոր կոլեկտիվ Հայաստանի պարի պետական անսամբլը Կապանում, 2011թ.:**


Լուսանկարը՝ Մելիք Բաղդասարյանի

**Շմավոն Մովսիսյանի անվան թանգարանը՝ հիմնանորոգված:**


Լուսանկարը՝ Մելիք Բաղդասարյանի

**Կապանի երկրագիտական թանգարանը՝ հիմնանորոգված:**


Լուսանկարը՝ Մելիք Բաղդասարյանի

**Կապանի մշակույթի կենտրոնի վերաշինված կինոդահլիճը:**

■ ԽՈՍՔ ԵՎ ԳՈՐԾ

## ՆՈՐ ՏԵՍՔ՝ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻՆ, ԿԱՄՈՒՐՋՆԵՐԻՆ ՈՒ ԱՆՑՈՒՄՆԵՐԻՆ


Լուսանկարը՝ Մելիք Բաղդասարյանի


Լուսանկարը՝ Մելիք Բաղդասարյանի

**Ո՞վ է ճիշտ այդ տեղեկատվությունը, եւ ի՞նչ հետեւանք կարող է ունենալ ավանդական ոչ բարի այդ գործելակերպը:**

– Նախեւառաջ ես դատապարտում եմ ընտրողների անձնագրերը հավաքելու գործելակերպը, ինչի մասին ինքս նույնպես ահազանգեր եմ ստանում: N38 ԸՀՀ-ն պետք է ի գիտություն ընդունի մեր սույն մտահոգությունը: Մյուս կողմից՝ ընտրողները պետք է շատ լավ իմանան, որ անձնագրերի հավաքումը զուտ հոգեբանական մանեւր է եւ չի կարող անդրադարձ ունենալ բուն քվեարկության ընթացքի վրա: Այսպես ասեմ ընտրողին՝ անձնագիրը տալուց հետո անգամ անպայման գնացեք ու քվեարկեք ձեր ուզած թեկնածուի օգտին, անձնագիրը տալը ձեզ վրա որեւէ պարտավորություն չի դնում: Ինչ վերաբերում է ընտրացուցակներին, ապա դրանց հետագա ճշտումը ե՛ւ քաղաքապետարանի աշխատակիցների, ե՛ւ իմ նախընտրական շտաբի անդամների ուշադրության կենտրոնում է: Չպետք է մոռանալ, որ Կապանում գրեթե բոլորը (հատկապես մեկ տեղամասի կտրվածքով) միմյանց ճանաչում են, եւ այնքան էլ հեշտ չի լինի ընտրատարածքում մեռած հոգիներ ունենալ:

**– Կապանում ծնված, մեծացած, տարբեր կոլեկտիվներում աշխատած անձնավորություն եք: Մանավանդ անցած չորս տարում ամենատարբեր խավի ներկայացուցիչների հետ շփվելու բազում առիթներ եք ունեցել: Ըստ Ձեզ՝ ո՞վ է կապանցին, հիմնական ինչպիսի՞ հատկանիշներով է օժտված նա: Ի վերջո, համայնքում հիմա մի այնպիսի իրավիճակ է ստեղծված, որից դուրս գալու ելքը միայն ու միայն կապանցի ընտրողը կարող է որոշել:**

– Կապանցին հայրենասեր է, ազնիվ է, հյուրասեր է, աշխատասեր է, պետության անմնացորդ նվիրված է, օրենքը հարգող եւ սիրող է, անդավաճան ընկեր է, անսահման համբերատար ու հանդուրժող է: Բոլոր այս որակները, կարծեք, եւս մեկ անգամ քննություն բռնեցին Արցախյան գոյամարտի եւ մեր անկախ պետականության վերականգնման դժվարին, բայց եւ հերոսական տարիներին: Այդ ժամանակ կապանցին եւս մեկ անգամ ցույց տվեց, թե ով է ինքը: Կյանքը բազմիցս է ապացուցել, որ կրիտիկական պահին, օրհասական ժամին կապանցիները միավորվում եւ մի բռունցք են դառնում: Եվ այդ դեպքում ոչ մեկը չի կարող կանգնեցնել նրանց: Ուստիեւ, խորհուրդ չէի տա, որ որեւէ մեկը խաղար կապանցու արժանապատվության հետ, համբերությունն էլ սահման ունի: Այսօր այն վիճակն է, որ ամեն մեկը պետք է գործի կշռադատված, օրենքի սահմաններում, իր անձնական շահը պետականի հետ չշփոթելով, իր անձնական կարծիքն ուրիշին չպարտադրելով, իր անձին նվիրված մեկին հանրությանը չփաթաթելով: Կապանցին ի վիճակի է կատարելու իր ընտրությունը: Հակառակ դեպքում շատ դժվար կլինի հետ բերել մարդկանց հավատն ու վստահությունը:

**– Մինչեւ քվեարկություն, հավանաբար, չենք կարող նորից զրուցել, ուստիեւ կուզենայինք Ձեր մաղթանքը լսել՝ ընտրողներին ուղղված:**

– Բոլորին խաղաղություն եւ բարի ընտրություններ եմ մաղթում: Ցանկանում եմ, որ սեպտեմբերի 10-ին Կապանն արթնանա չտրորված արժանապատվությամբ եւ ապագային վստահաբար նայելու բոլոր հիմքերն ունենալով:

**Հարցազրույցը՝ ԱՂԱՎՆԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ**

# Ստեղծարար աշխատանքի չորս տարի եւ, իհարկե, հիմնախնդիրներ ու մարտահրավերներ

## Կապանի քաղաքապետ Արտուր Աթայանի հաշվետվությունը համայնքի անդամներին

**Սիրելի՛ հայրենակիցներ
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներով, կարեւորելով քաղաքապետարանի գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունը, ինչպես եւ համայնքի անդամների առջեւ քաղաքապետի հաշվետու լինելու հանգամանքը՝ ներկայացնում եմ հաշվետվություն՝ անցած չորս տարում (2008-2012թթ.) քաղաքապետարանի գործունեության մասին, եւ ընդհանուր տեղեկատվություն Կապանի սոցիալ-տնտեսական կացության, ինչպես եւ համայնքի առջեւ ծառացած հիմնախնդիրների մասին: Հաշվետվությունը թեեւ համապարփակ է, բայց հնարավորինս համառոտ է՝ պարզ շարադրանքով, որպեսզի առավելագույնս մատչելի ու հասկանալի լինի հանրության բոլոր խավերին:**

### Համայնքային բյուջե եւ ներդրումներ ֆինանսական այլ աղբյուրներից

2008թ. հոկտեմբերի 12-ի ՏԻՄ ընտրություններից հետո մշակել եւ նորընտիր ավագանու հաստատմանն ենք ներկայացրել համայնքի քառամյա զարգացման ծրագիրը (2008-2012թթ.), որի հիմքում դրվել են նաեւ իմ նախընտրական ծրագրի հիմնադրույթները: Ընթացքում, անշուշտ, չենք բավարարվել դրանով, քանի որ նորանոր հարցեր են ծագել: Զարգացման ծրագրում մատնանշված խնդիրները հաշվի են առնվել համայնքի տարեկան բյուջեների նախագծերը մշակելիս՝ կախված առկա ռեսուրսներից: Ըստ տարիների համայնքն ունեցել է բյուջե՝ հաստատված ավագանու կողմից, որը նպատակաուղղված է եղել համայնքի նորմալ կենսագործունեության ապահովմանը, համայնքային խնդիրների լուծմանը, համայնքի քառամյա ծրագրի եւ քաղաքապետարանի՝ օրենքով վերապահված լիազորությունների իրականացմանը:

Կապանի քաղաքապետարանի գործունեության հիմնական ցուցանիշներից մեկը, եթե ոչ ամենակարեւորը, համայնքային բյուջեի ձեւավորման ուղղությամբ տարվող աշխատանքն է: Ստորեւ ներկայացվող թվերը խոսում են այն մասին, թե քաղաքային իշխանությունը որքանով է լուծել այդ խնդիրը: Կապանի բյուջեի եկամտային մասն ըստ տարիների ունեցել է հետեւյալ պատկերը՝ 2008թ.՝ 663,7 մլն դրամ, 2009թ.՝ 842,3 մլն դրամ, 2010թ.՝ 1 մլրդ 37.8 մլն դրամ, 2011թ.՝ 923,7 մլն դրամ, 2012թ.՝ 1 մլրդ 82,7 մլն դրամ (ըստ հաստատված բյուջեի):

Սեփական եկամուտների հավաքումը (մտնում է բյուջեի եկամտային մասի մեջ) ունեցել է հետեւյալ պատկերը՝ 2008թ.՝ 150,7 մլն դրամ, 2009թ.՝ 213,6 մլն դրամ, 2010թ.՝ 267,7 մլն դրամ, 2011թ.՝ 280,7 մլն դրամ, 2012թ. (նախատեսված)՝ 387,1 մլն դրամ:

Նշված թվերը վկայում են, որ Կապանի համայնքային բյուջեն անցած չորս տարում աճել է 1,6 անգամ (419 մլն դրամով) կամ 63,1%-ով: Սեփական եկամուտն այդ ընթացքում աճել է 236,4 մլն դրամով: Սեփական եկամուտի ավելացումը հիմնականում պայմանավորված է եղել գույքահարկից (67,3%), տեղական տուրքերից (120%), անշարժ գույքի վարձակալությունից (232%) գանձվող վճարների եւ այլ եկամուտների (105%) ավելացումով: Այդ ընթացքում աճել են նաեւ պաշտոնական դրամաշնորհները՝ 2008թ.՝ 374,6 մլն դրամ, իսկ ընթացիկ տարում (նախատեսված է)՝ 590,1 մլն դրամ (57,5% աճ): Ոչ պակաս ուշագրավ է փաստը, որ քաղաքապետարանն այդ ընթացքում մարել է նախկինից ժառանգություն ստացած 73,9 մլն դրամ պարտքերը (պարտքերի կառուցվածքում գերակշռող մաս էին կազմում աշխատավարձը, սոցվճարը եւ մի շարք ենթակառուցվածքների ընթացիկ կրեդիտորական պարտքերը):

Սակայն մենք չենք բավարարվել համայնքային բյուջեի միջոցներով եւ գտել ենք ֆինանսավորման հավելյալ աղբյուրներ՝ հաշվի առնելով մարզկենտրոնի առջեւ ծառացած խնդիրների ծավալն ու բազմազանությունը: Եվ 3,5 տարվա ընթացքում հաջողվել է քաղաքի առջեւ ծառացած խնդիրների լուծման համար ներգրավել եւս 368,4 մլն դրամ (ըստ տարիների՝ 2008թ.՝ 15,8 մլն դրամ, 2009թ.՝ 75,6 մլն դրամ, 2010թ.՝ 91,5 մլն դրամ, 2011թ.՝ 141,7 մլն դրամ, 2012թ. 1-ին կիսամյակ՝ 43,8 մլն դրամ): Առավել խոշոր դոնորներն են եղել «Զանգեզուրի ՊՄԿ» եւ «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲ ընկերությունները:

Կապանի առջեւ ծառացած խնդիրների լուծմանն ուղղվել են նաեւ պետական բյուջեի միջոցներ (մարզին հատկացվող գումարների շրջանակում): Այդ հատկացումներն ըստ տարիների ունեն հետեւյալ պատկերը՝ 2008թ.՝ 508,5 մլն դրամ, 2009թ.՝ 712,8 մլն դրամ, 2010թ.՝ 123,0 մլն դրամ, 2011թ.՝ 781,4 մլն դրամ, 2012թ. 1-ին կիսամյակ՝ 498,8 մլն դրամ:

### Գործունեությունը կոմունալ տնտեսության բնագավառում

Կարեւորել ենք, նախեւառաջ, բազմաբնակարան շենքերի կառավարումը, ինչպես եւ դրանց պահպանումն ու սպասարկումը: Այսօր համայնքում ունենք 251 բազմաբնակարան շենք, 1894 անհատական բնակելի տուն, 35967 քառ. մ ոչ բնակելի տարածք, 30 վարչական, 26 ոչ վարչական շենք ու շինություն: Բազմաբնակարան շենքերի կառավարման համար ժամանակին ստեղծվել է 20 համատիրություն: Դրանք են՝ «Կենտրոն», «Գետափ», «Մուշեղ Հարությունյան», «Երկաթուղայիններ», «Սպանդարյան», «Զորավար Դավիթ բեկ», «Լեռնագործներ», «Սյունիք», «Հունան», «Հունան-1», «Սարահարթ», «Ձորք», «Հալիձոր», «Բաղաբերդ», «Բաղաբերդ-1», «Անդոկ», «Վահանավանք», «Ձորք-1», «Գարեգին Նժդեհ-1» եւ «Աջափնյակ»: Շարունակաբար ձգտել ենք բարձրացնել համատիրությունների դերը բազմաբնակարան շենքերի կառավարման գործում: Այդուհանդերձ, համատիրությունները միշտ չէ, որ արդարացրել են բնակչության սպասելիքները: Լուրջ դժվարություններ կան բնակարանների սպասարկման վարձի հավաքման հարցում, թեեւ 1 քառ. մ տարածքի համար բավականին ցածր գումար է սահմանված՝ 6-7 դրամ: Չսպասելով, որ բազմաբնակարան շենքերի խնդիրները լուծեն համատիրությունները, ինչը նաեւ իրատեսական չէ, քաղաքապետարանն ինքն է ստանձնել դրանց լուծումը: Այդ նպատակով անցած չորս տարում ծախսվել է մոտ 445 մլն դրամ: Բազմաբնակարան շենքերում հիմնականում նորոգել ենք տանիքները, մուտքերը, վերելակները:

Տեղին է նշել, որ համատիրությունների հետագա կայացման ճանապարհին կան նաեւ դժվարություններ: Մասնավորապես ժամանակն է փոփոխություններ կատարելու «Համատիրությունների մասին» ՀՀ օրենքում: Ի վերջո չպետք է մոռանալ, որ այն չի կայանում: Թույլ է համատիրությունների նյութատեխնիկական բազան:



Մինչդեռ Կապանի բազմահարկերն ունեն դեռեւս չլուծված բազում խնդիրներ: Օրինակ, վերջնականապես լուծված չէ տանիքների հարցը, հիմնանորոգման կարիք ունի ջրահեռացման ու ջրամատակարարման ներքին ցանցը:

Աճող սերնդի եւ հատկապես երեխաների դաստիարակության ու ազատ ժամանցի արդյունավետ կազմակերպման համար առաջնահերթ ուշադրություն ենք դարձրել խաղահրապարակների ցանցի ընդլայնմանը, հիմնանորոգմանն ու դրանց կահավորմանը: Այդ նպատակով ծախսել ենք 135,3 մլն դրամ: Հիմնել ենք հինգ նոր խաղահրապարակ, հիմնանորոգել նախկինում կառուցված եւ տարիներով չգործող 14 խաղահրապարակ: Եվ այսօր լիարժեք գործում է 30 խաղահրապարակ:

Մեր ուշադրության կենտրոնում է եղել քաղաքային ենթակառույցների պահպանումն ու զարգացումը: Մի քանի օրինակ. չորս տարում համայնքի փողոցների (ճանապարհների) վերանորոգման համար ծախսվել է 976 մլն դրամ, 43,2 մլն դրամ ծախսվել է փողոցների եւ ճանապարհների ջրահեռացման հանգույցների, հեղեղատարների, ջրընդունիչ հորերի եւ առուների վերանորոգման, վերականգնման եւ մաքրման համար, 114,7 մլն դրամ ծախսվել է գետափնյա փողոցների եւ ավտոճանապարհների հենապատերի կառուցման, վերականգնման ու վերանորոգման ուղղությամբ: Լուծվել են բազում այլ հարցեր եւս:

Ներդրումներ են կատարվել քաղաքի սանիտարական մաքրման, բարեկարգման ու կանաչապատման ուղղությամբ: Չորս տարում այդ ներդրումների ծավալը կազմել է մոտ 125 մլն դրամ: Իսկ կատարված աշխատանքների համառոտ ցանկն այսպիսին է՝ա) Վաչագան եւ Ողջի գետերի հուների մաքրում, մետաղական աղբամանների ձեռքբերում եւ տեղադրում, աղբատեղերի հարթակների կառուցում եւ վերանորոգում, բ) փողոցային լուսավորության համակարգի նորոգում եւ վերականգնում, գ) քաղաքի տարբեր թաղամասերում ցայտաղբյուրների տեղադրում, դ) Բաղաբուրջի հուշահամալիրի բարեկարգում, ե) քաղաքի սանմաքրմանն ուղղված աշխատանքներ:

Դեռեւս 2008թ. անդրադարձել ենք կոմունալ ոլորտի կառավարման խնդրին: «Կապանի կոմունալ ծառայություն» եւ «Կապանի սանիտարական սպասարկում» համայնքային հիմնարկների միավորմամբ ստեղծել ենք «Կապա-

նի կոմունալ ծառայություն» հիմնարկը: Այդ բարեփոխման շնորհիվ ունեցանք մի կառույց, առանց որի հնարավոր չէ պատկերացնել քաղաքի կոմունալ տնտեսության վիճակը եւ ընդհանրապես քաղաքի նորմալ ընթացքը: Կարելի է ասել, որ այդ ծառայությանը հաջողվում է պատշաճ մակարդակով իրականացնել աղբահանությունը, բազմաբնակարան շենքերի բակերի եւ փողոցների մաքրությունը, առհասարակ քաղաքի սանիտարական նորմալ վիճակի ապահովումը, կանաչապատ տարածքների մաքրումը, ամառային սեզոնին քաղաքի փողոցների ջրցանման աշխատանքները, փողոցային լուսավորության կարգավորումը, ձմռան շրջանում փողոցներում մաքրության եւ անվտանգ երթեւեկության պայմանների ապահովումը:

Մեր կարծիքով, շատ կարեւոր միջոցառում էր «Կապանի վթարային-վերանորոգման ծառայություն» հիմնարկի ստեղծումը: Դրա մոտ երկամյա գործունեությունը ցույց տվեց, որ քաղաքը նման ծառայության կարիք ունի: Համատիրությունների ոչ լիարժեք գործունեության պարագայում այդ ծառայության միջոցով ամեն օր բազմաթիվ հարցեր են լուծվում բազմաբնակարան շենքերում, մանավանդ, երբ վթարներն առնչվում են սոցիալապես անապահով խավը ներկայացնող ընտանիքների հետ:

Ձգտել ենք աշխատանքային նորմալ պայմաններ ստեղծել քաղաքապետարանում, ենթակա կառույցներում: Ուստիեւ պետական ու համայնքային հիմնարկների շենքային պայմանների բարելավման, դրանց համար գույքի ձեռքբերման նպատակով ծախսվել է մոտ 400 մլն դրամ:

Այդ բոլորով հանդերձ՝ քաղաքի կոմունալ տնտեսությունում կան մի շարք խնդիրներ, որոնց լուծումը կդրվի մեր հետագա գործունեության հիմքում:

## Քաղաքաշինություն եւ սպասարկման ոլորտ

Քաղաքաշինության բնագավառում կատարված աշխատանքների մասին որոշ տեղեկություններ արտացոլված են սույն հաշվետվության նախորդ բաժնում: Նկատի ունեմ հատկապես բազմաբնակարան շենքերի կառավարման, խաղահրապարակների կառուցման, քաղաքային ենթակառուցվածքների պահպանման ու զարգացման, քաղաքի բարեկարգման ու կանաչապատման ուղղությամբ կատարված աշխատանքները: Այդ բոլորով հանդերձ, սակայն, ուզում եմ առանձին կանգ առնել քաղաքաշինական որոշ հարցերի վրա:

Նախ՝ համայնքի գլխավոր հատակագծի մասին: ՀՀ կառավարության 2005թ. ապրիլի 20-ի N723-Ն որոշմամբ հաստատված գլխավոր հատակագիծը մի քանի լուրջ բացթողումներ ունի, եւ որոշակի աշխատանք ենք տարել դրանց վերաբերյալ մեր շտկումները կառավարություն ներկայացնելու համար: Այդ բացթողումներից երկուսը՝ ստորեւ: Ճիշտ չէ ֆիքսված որոշ հողատարածքների նպատակային նշանակությունը: Արված չէ հողերի գոտիավորումը (բացառությամբ կենտրոնի եւ Շինարարների թաղամասի):

Որոշակի աշխատանք ենք կատարել համայնքի քաղաքաշինական կադաստրի վարումը կանոնակարգելու ուղղությամբ, որը, ինչպես ամբողջ հանրապետությունում, դեռեւս վերջնական լուծում չի ստացել:

Պատրաստել ենք եւ մոտ ապագայում ավագանու հաստատմանը կներկայացնենք համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը:

Հետեւողականորեն իրականացրել ենք քաղաքաշինական բոլոր այն գործառույթները, որ սահմանված են գործող օրենսդրությամբ:

Մենք հաճախ ենք քննադատվել (երբեմն՝ արդարացիորեն) քաղաքաշինական ինչ-ինչ հարցերի սխալ լուծման, համայնքի քաղաքաշինական դեմքն աղավաղող որոշ կառույցների համար: Անկեղծ լինեմ՝ միշտ էլ ուշադրությամբ ենք վերաբերվել այդ դիտողություններին եւ ձգտել բացառել ոչ ճիշտ լուծումները քաղաքաշինության ոլորտում: Այդ աշխատանքներն ավելի համակարգված դարձնելու համար առաջիկայում կստեղծենք քաղաքաշինական (ճարտարապետական) խորհուրդ (հասարակական հիմունքով), որպեսզի քաղաքաշինական առավել հավակնոտ ծրագրերը նախապես դարձնենք մասնագետների ու հանրության քննարկման առարկա:

Հետեւողական ենք եղել ինքնակամ շինարարությունները կասեցնելու, դրանց հետեւանքներն օրենքով սահմանված կարգով վերացնելու ուղղությամբ: Միայն վերջին երկու տարում մոտ 5 մլն դրամի վարչական տուգանք է կիրառվել նման կառույցների հեղինակների հանդեպ: Անցած չորս տարում մոտ 50 ինքնակամ կառույց է վերացվել կամ բերվել օրինական դաշտ, եթե դա հնարավոր է եղել գործող օրենսդրության շրջանակներում: Զուգահեռաբար կարեւորել ենք բնակչության շրջանում տարվող բացատրական աշխատանքը քաղաքաշինական հարցերի վերաբերյալ:

Քաղաքի ճարտարապետական դեմքին լուրջ ստվեր էին ձգում մետաղական կամ փայտյա տնակ-տաղավարները՝ 90-ական թվականներից տեղադրված, որոնք օգտագործվում էին եւ են առեւտրի, սպասարկման ծառայություններ մատուցելու եւ այլ նպատակների համար: Անցած չորս տարում փորձել ենք քաղաքն ազատել այդ աղավաղումից: Մասնավորապես՝ վերացվել է քաղաքային շուկայի դիմաց՝ Ողջի գետի ափն ի վեր, Հունան Ավետիսյան փողոցի 1-ին շենքի դիմաց ստեղծված այդ անբնական իրողությունը: Ներկայումս այնտեղ կառուցվում են երկաթբետոնե հարթակներ, որոնց վրա կդրվի միատեսակ նախագծով պատրաստված մոտ 90 տաղավար: Որոշ տեղերում էլ անշուք տաղավարների զբաղեցրած տարածքը դարձրել ենք խաղահրապարակ, ինչպես եւ նախատեսված էր կամ եղել է ի սկզբանե:

Կապանի ճարտարապետական առանձնահատկություններից է (որը եւ քաղաքին առանձնակի շուք ու հմայք է հաղորդում) Վաչագան եւ Ողջի գետերի առկայությունը: Բնական այդ արժանիքն ըստ պատշաճի պահելու եւ պահպանելու համար մշտապես ուշադրության կենտրոնում ենք պահել դրանց ափապաշտպան աշխատանքների իրականացումը, ինչպեսեւ հունի մաքրումը: Այս տարվա գարնանային հորդառատ անձրեւները կրկին ցույց տվեցին, որ ափապաշտպան աշխատանքներն ավելի հիմնովին պիտի կատարվեն:

Ինչպես արդեն նշել ենք, առանձնահատուկ նշանակություն ենք տվել քաղաքի փողոցների բարեկարգմանը, ասֆալտապատմանը: Կապանը ոչ միայն Սյունիքի գլխավոր քաղաքն է, այլեւ տարանցիկ բնակավայր է միջազգային նշանակության ավտոմայրուղու վրա: Եվ ձգտել ենք, որ քաղաքն ունենա իր ներկայիս դերին ու առաքելությանը պատշաճող տեսք, ենթակառուցվածքներ:

Ուշադրության կենտրոնում է եղել բնակչության տրանսպորտային սպասարկումը: Հաշվի առնելով քաղաքի տարածված-փռված դիրքը՝ առանձնապես կարեւորել ենք համայնքային երթուղային տրանսպորտի հստակ աշխատանքը: Քաղաքի վեց երթուղում, նաեւ «Լավ ընկեր» ՍՊԸ-ի գործունեության շնորհիվ, հաստատվել է սպասարկման բավարար մակարդակ: Եվ, որ կարեւոր է, վերջին չորս տարում 50 դրամ վճարը մնացել է անփոփոխ: Նշեմ նաեւ, որ այդ երթուղիներում աշխատելու համար ձեռք է բերվել «Բոգդան» տիպի ժամանակակից 9 ավտոբուս: Տրանսպորտային երթեւեկություն է ապահովվում նաեւ շրջանի գյուղերի հետ:

Վերջին չորս տարում իրականացված քաղաքաշինական ծրագրերին ծանոթանալիս կնկատեք այն մեծ ուշադրությունը, որ դարձրել ենք բնակչության բուժական սպասարկմանը եւ հատկապես «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի գործունեությանը: Ավելորդ չեմ համարում ընդգծել առավել նշանակալից երկու ծրագրի արդյունքը. 2010թ. հիմնանորոգվել են բժշկական կենտրոնի թերապեւտիկ եւ վիրաբուժական բաժանմունքները: «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցով էլ 2010թ. հիմնանորոգվել է մանկական բաժանմունքի մասնաշենքը:

Իրականացրել ենք մեր լիազորությունները հողօգտագործման բնագավառում (և՛ պարտադիր, և՛ պատվիրակված լիազորությունները): Հիշեցնեմ, որ քաղաքի վարչական տարածքը կազմում է 4863հա հողատարածք:

Իրականացրել ենք ներհամայնքային նշանակության մի շարք այլ ծրագրեր եւս, որոնք, ի վերջո, նպաստել են քաղաքի առօրյայի ճիշտ եւ արդյունավետ կազմակերպմանը:

Ակտիվ համագործակցություն է եղել Կապանի քաղաքապետարանի եւ «Հայջրմուղկոյուղի» ՓԲ ընկերության միջեւ, որը տվել է ուշագրավ արդյունք: Մասնավորապես Ասիական զարգացման բանկի (մոտ 346 մլն դրամ) եւ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սեփական միջոցների հաշվին (մոտ 37 մլն դրամ) կատարվել են ջրամատակարարման ցանցի հիմնանորոգումներ, ինչպես եւ աշխատանքներ գլխամասային կառույցներում: Կապանի տեղամասին է հատկացվել մոտ 70 մլն դրամի մեքենասարքավորում: Ջրային տնտեսության ոլորտում, այդուհանդերձ, դեռեւս լուրջ խնդիրներ ունենք, ինչը, հուսով ենք, համատեղ ջանքերով կվերացնենք: Տեղյակ պահեմ, որ ներկայումս նախագծային փուլում է ներտնտեսային ցանցի վերականգնման նոր ծրագիրը՝ 2.7 մլն եվրո արժողությամբ:

## Աշխատանք կրթության բնագավառում

Քաղաքապետարանն անցած տարիներին կապ է ունեցել համայնքի տարածքում գործող 2 ավագ, 5 միջնակարգ, 7 հիմնական հանրակրթական դպրոցների, 1 խնամքի կենտրոնի, 1 հատուկ կրթահամալիրի, ինչպես եւ ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի, պետական, արվեստի ու բժշկական քոլեջների, ռուս-հայկական ժամանակակից հումանիտար ակադեմիայի Կապանի մասնաճյուղի, Երեւանի գյուղատնտեսական համալսարանի Կապանի ուսումնական կենտրոնի, «Հայաստանի Եվրոպական քոլեջ» հիմնադրամի Կապանի մասնաճյուղի հետ: Մենք ծանոթ ենք այդ կրթօջախների հիմնախնդիրներին եւ ձգտել ենք հնարավորության սահմաններում աջակցել դրանց լուծմանը: Մեզ անհանգստացնում է այն իրողությունը, որ վերջին տարիներին ակնհայտորեն նվազում է բարձրագույն եւ միջնակարգ մասնագիտական՝ նշված հաստատություններում սովորողների թիվը: Դա հատուկ ուսումնասիրության եւ վերլուծության կարիք ունեցող հարց է, որ մեր առաջիկա անելիքների թվին ենք դասել:

Նախակրթության ոլորտում քաղաքապետարանն իրականացրել է պարտադիր լիազորություն: Այսօր Կապանում գործում է 12 մանկապարտեզ՝ 61 խմբով (7 խումբը կազմավորվել է վերջին 4 տարում): Մանկապարտեզներում ընդգրկված է (2012թ. 1-ին կիսամյակի արդյունքներ) 1364 երեխա: 2008թ. մանկապարտեզներում ընդգրկված էր 1123 երեխա, այսինքն՝ անցած 4 տարում 241-ով ավելացել է նախակրթական ուսումնական հաստատությունների սաների միջին թիվը: 2008թ. համեմատությամբ 2011թ. մոտ 100 մլն դրամով ավելացել է մանկապարտեզների պահպանման ծախսը, ինչն իր մեջ ներառում է և՛ սննդապահովմանը, և՛ ջերմամատակարարմանը, և՛ անձնակազմի վարձատրությանը, և՛ նոր խմբասենյակների հիմնմանն ու գույքավորմանն ուղղված միջոցները: Աշխա-

Շարունակությունը՝ էջ 10

АՂՅՈՒՍԱԿ 1

### Կապանի համայնքային բյուջեի եկամտային մասը 2008-2012թթ. (ՀՀ դրամ)




ԱՂՅՈՒՍԱԿ 2

### Սեփական եկամուտների հավաքման դասկերը 2008-2012թթ.



# Ստեղծարար աշխատանքի չորս տարի եւ, իհարկե, հիմնախնդիրներ ու մարտահրավերներ

## Կապանի քաղաքապետ Արտուր Աթայանի հաշվետվությունը համայնքի անդամներին

Սկիզբը՝ էջ 9

տանքներ են տարվել մանկապարտեզների մանկավարժական անձնակազմի կրթական մակարդակի բարելավման ուղղությամբ: Այսպես՝ 12 մանկապարտեզում աշխատող 176 մանկավարժից 40-ն ունի բարձրագույն, մնացածը՝ միջին մասնագիտական կրթություն: 10 մանկապարտեզ տեղավորված է տիպային շենքում, 2-ը՝ բազմաբնակարան շենքի 1-ին հարկում: Անցած 4 տարում բոլոր մանկապարտեզներում կատարվել են հիմնանորոգման աշխատանքներ, ինչի համար, ֆինանսավորման տարբեր աղբյուրների հաշվին, ծախսվել է 73,2 մլն դրամ: Էական փոփոխություններ են կատարվել նախակրթարանների կրթադաստիարակչական գործունեության ուղղությամբ, բարելավվել է ուսումնանյութական բազան: Այդ ամենով հանդերձ, սակայն, համայնքի նախակրթական տարիքի 1925 երեխայից մանկապարտեզում ընդգրկված է 1364-ը (70,8%): Ուրեմնեւ՝ դուրս մնացած երեխաներին մանկապարտեզում ընդգրկելու խնդիր ունենք: Այսօր արդեն կա մոտ 500 երեխայի՝ մանկապարտեզ ընդունելու դիմում, որին չենք կարողանում դրական ընթացք տալ: Դա շատ ցավոտ խնդիր է, եւ պիտի կարողանանք հնարավորինս կարճ ժամանակամիջոցում լուծել: Մի հարց էլ. անցած 4 տարում ծնողական վարձը 3000-ից (2010թ.) դարձել է 4000 դրամ, որը կազմում է մեկ երեխայի վրա կատարվող ամսական ծախսի 16,6%-ը: Բայց դա չի նշանակում, որ պատրաստվում ենք վարձավճարների ավելացման՝ հաշվի առնելով բնակչության սոցիալական ոչ բարվոք վիճակը:

Կապանի կրթադաստիարակչական համակարգում իրենց ուրույն տեղն ունեն արտադպրոցական ուսումնական հաստատությունները: Դրանց գործունեության արդյունավետության բարձրացման, պետական ուսումնական ծրագրերի իրականացման, կրթական չափորոշիչների կիրառման, կրթության որակի ապահովման ուղղությամբ հետեւողական աշխատանք է տարվել: Ներկայումս Կապանում գործում են երեք երաժշտական, մեկ արվեստի, մեկ գեղարվեստի դպրոց, մարմնամարզության, աթլետիկայի, մանկապատանեկան մարզադպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն: Մի ցուցանիշ եւս, որ խոսում է արտադպրոցական նշված հաստատությունների աշխատանքների մասին. 2009-10 ուսումնական տարում այդ հաստատություններ էին հաճախում 1121 երեխա, իսկ 2011-2012թ. ուստարում՝ 1221 երեխա (100-ով ավելի): Սովորողների աճը նկատելի է հատկապես մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնում, աթլետիկայի մարզադպրոցում:

Արտադպրոցական հաստատությունների սաները մասնակցել են հանրապետական փառատոների ու մրցույթների (Գյումրու ամենամյա «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոն, «Ճանապարհորդող նոտաներ» միջազգային երաժշտական փառատոն եւ այլն)՝ արժանանալով մրցանակային տեղերի, դիպլոմների, մեդալների: Երաժշտական դպրոցներում պարբերաբար անց են կացվել վարպետաց դասեր՝ Կոմիտասի անվան կոնսերվատորիայի պրոֆեսորների մասնակցությամբ: Յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում անց են կացվել հաշվետու համերգներ: Գեղարվեստի եւ արվեստի մանկական դպրոցների սաները մասնակցել են հանրապետական եւ միջազգային ցուցահանդեսների («Եգիպտոսը երեխաների աչքերով», Չեխիայի «Լիդիցե-2011», «Լիդիցե-2012», «Ես անկախության սերունդն եմ», «Սպորտը կյանք է» եւ այլն):

### Մշակութային քաղաքականություն

Կապանը տասնամյակներ շարունակ եղել է Հայաստանի ամենամշակութային քաղաքներից մեկը: Մեր նպատակն է եղել ոչ միայն պահպանել քաղաքի այդ համարումը, այլեւ հիմք դնել նոր ավանդույթների, մշակույթը հասցնել նոր մակարդակի: Չորս տարի անց կարող եմ հայտարարել, որ այդ խնդիրը հիմնականում լուծվել է, թեեւ բնագավառում դեռեւս շատ անելիքներ ունենք: Քաղաքում ի սկզբանե եղել են եւ հետագայում էլ ստեղծվել են մշակութային հիմնարկներ, որոնց միջոցով իրականացրել ենք այդ քաղաքականությունը՝ Ալ.Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոն, երկրագիտական թանգարան, արվեստի քոլեջ, երաժշտական ու գեղարվեստի դպրոցներ, ակումբագրադարանային միավորում, Շ.Մովսիսյանի անվան թանգարան, մշակույթի կենտրոն, Վ.Սարգսյանի անվան զբոսայգի, մարզային գրադարան, պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության տարածքային կառույցներ եւ այլն:

Անցած չորս տարում, նախեւառաջ, էականորեն բարելավվել է այդ հաստատությունների նյութատեխնիկական բազան: Բավական է նշել միայն, որ Կապանի պետթատրոնն ապահովվել է նոր շենքով՝ բարեկարգված, հիմնանորոգված, որ Կապանի երկրագիտական թանգարանի համար ստեղծվել է շենքային լավագույն հարմարություն:

Մշակույթի նախարարության համապատասխան կառույցների հետ ապահովվել ենք համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային 228 հուշարձանի պատշաճ պահպանությունը: Միաժամանակ ավարտին է հասցվել Վահանավանքի վանական համալիրի եւ Հալիձորի բերդի վերականգնողական աշխատանքների առաջին փուլը: Թեեւ լուրջ թերացումներ ու բացթողումներ են եղել այդ աշխատանքներում, բայց եւ կատարվածն ուշագրավ է: Իսկ մենք հավուր պատշաճի կնշենք Վահանավանքի հիմնադրման 1100-ամյակը, որ լրացավ մի քանի ամիս առաջ:

Մշակույթի ոլորտի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու համար բարեփոխումներ կատարեցինք նաեւ այդ ոլորտում: 2009թ. վերակազմավորվեց ակումբագրադարանային միավորումը, 2010թ. ստեղծվեց Շ.Մովսիսյանի անվան պատմության թանգարանը, 2011թ. ստեղծվեց մանկական կենտրոնը:

Ամեն տարի համայնքում նշվել են Հայաստանի Հանրապետության տոներն ու հիշատակի օրերը, կազմակերպվել դրանց հետ կապված միջոցառումներ: Հայ առաքելական եկեղեցու Սյունյաց թեմի եւ մասնավորապես Կապանի Սբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու սպասավորների հետ կազմակերպվել են եկեղեցական տոներ եւ հոգեւոր բնույթի միջոցառումներ:

Պատրաստել եւ տարածել ենք քաղաքի պատմամշակութային հուշարձանների եւ տեսարժան վայրերի մասին տեղեկատվություն (օրացույց, նկարների հավաքածու եւ այլն):

Մենք, ինչպես նշեցինք, կարեւորել ենք կապանյան ավանդույթների պահպանումն ու զարգացումը: Հետաքրքիր եւ սպասված է դարձել հատկապես «Կապանյան օրեր» համաքաղաքային տոնակատարությունը, որը 2010 եւ 2011թթ. կազմակերպվեց առավել մասսայականությամբ ու մշակութային առավել բարձր մակարդակով:

Անվանի կապանցիների հիշատակի հավերժացումը, նրանց կյանքին ու գործին աճող սերնդին հաղորդակից դարձնելը նույնպես մեր ուշադրության կենտրոնում է եղել: Նախ՝ 2009թ. քաղաքի կենտրոնում դրվեց Հայաստանի 1-ին հանրապետության հիմնադիրներից մեկի՝ մեր հայրենակից Արամ Մանուկյանի կիսանդրին: Նույն օրը՝ դեկտեմբերի 20-ին, տեղի ունեցավ նաեւ նրա ծննդյան 130-ամյակին նվիրված գիտաժողով: 2009թ. Կապանը նշեց իր նշանավոր զավակ Սմբատ Մելիք-Ստեփանյանի 130-ամյակը: Իսկ 2011թ. նշեցինք կուսակցական եւ պետական գործիչ, մերօրյա Կապանի կառուցման գործում ակնառու դեր ունեցած Ռաֆիկ Մինասյանի 85-ամյակը: «Լեռնագործ» հյուրանոցի բակում դրվել է անվանի շինարար, Կապանի պատվավոր քաղաքացի, «Քաջարանշին» տրեստի նախկին կառավարիչ Սարգիս Վարդանյանի կիսանդրին, Երկաթուղայինների փողոցը վերակոչվել է նրա անվամբ: Մամուլի առանձին հրապարակումներով նշել ենք գրականության եւ արվեստի մերօրյա ներկայացուցիչներ, մեր համաքաղաքացիներ Ռոբերտ Կամոյանի եւ Գագիկ Դավթյանի հոբելյանները: Ըստ պատշաճի մեծարվել են բեմի երախտավորներ, Կապանի թատրոնի կայացման գործում անուրանալի դեր խաղացած Երվանդ Ղազանչյանն ու Գալյա Նովենցը (2010թ.):

Գրեթե ամեն տարի Կապանը եղավ փառատոների, մրցումների, ցուցահանդեսների համազգային ասպարեզ: Դրա բարձրակետը դարձավ «Արմմոնո» միջազգային փառատոնի մեկնարկը (2009թ.):

Կապանում արդեն ավանդույթ է դարձել «Ուսանողական ամառ» միջոցառման եւ «Մանկական ամառային հանգիստ» բակային ճամբարի կազմակերպումը: Մշակույթի կենտրոնի կողմից իրականացվող այդ ծրագրերը կարեւոր քայլ են ուսանողների եւ մանուկների ամառային հանգիստը կազմակերպելու ուղղությամբ: Բակային ճամբարում, օրինակ, այդ ընթացքում ընդգրկվել է 2800 երեխա:

Ժամանակը ցույց տվեց, որ ճիշտ էր մշակույթի կենտրոնից ակումբագրադարանային բնագավառի անջատումը եւ «Ակումբագրադարանային» ՀՈԱԿ-ի ստեղծումը, որն իր մեջ միավորում է մեկ մանկական, չորս ինքնուրույն եւ 10 ակումբ-գրադարան: Հատկապես գրադարանային աշխատանքում դրական տեղաշարժն ակնհայտ է: Գրադարանային աշխատանքի հիմնական ցուցանիշների աճի (ընթերցող, տացք, հաճախումներ, միջոցառումներ) հետ մեկտեղ իրականացվել է գրքային ֆոնդի համալրում (այժմ գրքային ֆոնդը կազմում է 189 583 օրինակ գիրք եւ բրոշյուր): Բազմաթիվ ու բազմաբովանդակ միջոցառումներից հատկապես հիշարժան է «Ազգային գրադարանային շաբաթ» ծրագրով ամեն տարի անցկացվող միջոցառումների շարքը:

2010թ. ստեղծվել է Շ.Մովսիսյանի անվան պատմության թանգարանը՝ 2010թ. հոկտեմբերի 5-ից ՀՈԱԿ-ի կարգավիճակով: Թեեւ թանգարանի հիմնանորոգումն ավարտին չենք հասցրել, բայց այն արդեն իսկ մշակութային հաճելի միջավայր է եւ շարունակում է հետաքրքրություն առաջացնել տարածաշրջանի դպրոցականների եւ ուսանողների, Կապան այցելող զբոսաշրջիկների մեջ: Այդ թանգարանն ունի լուսանկարների բացառիկ ֆոնդ, ինչի պահպանումն ու ցուցադրումը թանգարանի առաջնահերթություններից են:

### Սպորտ եւ մարմնակրթություն

Այս ոլորտները 2009-2012թթ. քանիցս մեզ հպարտանալու առիթ են տվել: Կապանի մարզադպրոցների սաները մասնակցել են աշխարհի, Եվրոպայի առաջնություններին, միջազգային եւ հանրապետական մրցումներին՝ գրավելով մրցանակային տեղեր, համապատասխանաբար՝ Կապանի աթլետիկայի մարզադպրոցի սաները՝ 55 մրցման, որից 23-ը՝ միջազգային, Կապանի մարմնամարզության մարզադպրոցը՝ 18 մրցման, որից 4-ը՝ միջազգային, Դավիթ Համբարձումյանի անվան մարզադպրոցը՝ 23 մրցման: Կապանի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի սաները շախմատի 10 մրցման են մասնակցել: Այս մրցումներին մեր մարզիկների մասնակցությունն ապահովելու համար ծախսվել է 17 մլն 986 հազար դրամ: Ավելի երեւելի արդյունքների են հասել աթլետիկայի մարզադպրոցի սաները: Մի քանի օրինակ. Կապանի աթլետները՝ Հայկանուշ Բեկլարյանը եւ Լեւոն Աղասյանը, հաջողությամբ հանդես եկան Իրանի Իսլամական Հանրապետության «Արեւածագի տասը օր» ավանդական դարձած ամենամյա մրցումներին:

Ֆրանսիայի Լիլ քաղաքում 2011թ. հուլիսին աթլետիկայի աշխարհի պատանեկան առաջնությանը հաջող հանդես եկավ Կապանի աթլետիկայի մասնագիտացված մարզադպրոցի սան Լեւոն Աղասյանը (մարզիչ՝ ՀՀ վաստակավոր մարզիչ Արսեն Պետրոսյան): Նա հաջող հաղթահարեց նախնական փուլը եւ մտավ եզրափակիչ՝ 11 ուժեղագույն աթլետների հետ պայքարում 15.24 մետր արդյունքով եռացատկում գրավելով 6-րդ տեղը: 2011-ին աթլետիկայի Եվրոպայի թիմային առաջնությունում (Ռեյկյավիկ) եռացատկի հատվածում Հայկանուշ Բեկլարյանը գրավեց երկրորդ մրցանակային տեղը: 2011թ. օգոստոսի 14-21-ը Երեւանում «Միասնություն սպորտով» նշանաբանով անցկացված Համահայկական հինգերորդ խաղերում Կապանի աթլետիկայի մասնագիտացված մարզադպրոցի սաները եւս մեկ անգամ անմասն չմնացին խաղարկվող մրցանակներից: Հայկանուշ Բեկլարյանը հեռացատկի հատվածում գրավեց երրորդ մրցանակային տեղը՝ սահմանելով անձնական ռեկորդ: Տարբեր տարածության մրցավազքերում մարզադպրոցի սաներ Վալյա Ավագյանը, Անուշ Սուրենյանը դարձան մրցանակակիրներ: «Եվրոպական պատանեկան օլիմպիական օրեր» մարզական փառատոնում (Թուրքիա, Տրապիզոն) Լեւոն Աղասյանը եռացատկում 15մ 49սմ արդյունքով գրավեց չորրորդ տեղը:

2009-ից ֆիզկուլտուրայի դերի բարձրացման եւ մասսայական սպորտի զարգացումը խթանելու նպատակով ՀՀ նախագահի մրցանակի համար անցկացվում է «Լավագույն մարզական ընտանիք» ստուգատեսը, որին ըստ արժանվույն մասնակցեցին Կապան քաղաքի պատվիրակները՝ արժանանալով մրցանակների: Այս տարվա մրցումներին Վիլեն Հարությունյանի (բասկետբոլի գնդակի նետում) եւ Նվեր Ադամյանի (պարանի ձգում) ընտանիքները դարձան հաղթողներ: Խրախուսանքները չեն ուշացել: 2009թ. դեկտեմբերի 15-ին Կապան քաղաքը պարգեւատրվել է ՀՀ նախագահի աշխատակազմի կողմից «Լավագույն քաղաքային մարզական համայնք» վկայագրի՝ ստուգատեսի եզրափակիչ փուլում 2-րդ տեղը գրավելու համար, իսկ Կապանի քաղաքապետը՝ ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար Արթուր Պետրոսյանի շնորհակալագրի՝ ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի համայնքային փուլը լավագույն ձեւով կազմակերպելու եւ անցկացնելու համար: Այս ամենի ամփոփումը ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի վկայագիրն էր (2011թ. դեկտեմբերի 12), որին արժանացել է Կապան համայնքը «Լավագույն քաղաքային մարզական համայնք» ստուգատեսում առաջին տեղ գրավելու համար՝ ընդսմին արժանանալով մեկ միլիոն դրամ մրցանակի:

Նախորդ չորս տարում ֆուտբոլի հանրապետության բարձրագույն խմբի առաջնությունում կայուն ելույթներով աչքի է ընկել Կապանի «Գանձասարը»՝ երկու անգամ դառնալով բրոնզե մրցանակակիր, նվաճելով նաեւ Եվրալիգայի գավաթի խաղարկության մասնակցության

ԽՈՍՔ ԵՎ ԳՈՐԾ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՅՄԱՆՆԵՐ՝ ՔԱՂԱՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ



Լուսանկարը՝ Մելիք Բաղդասարյանի

Կապանի թիվ 4 մանկապարտեզում:

ԱՂՅՈՒՍԱԿ 3

**Նախադպրոցական ուսումնական եւ արտադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների թիվը**

| | 2012թ. | 2008թ. |
|---|---|---|
| Նախադպրոցական ուսումնական հաստատություններ | 1,364 | 1,123 |
| Արտադպրոցական հաստատություններ | 1,221 | 1,121 |

իրավունք, ընդ որում՝ այդ պատվավոր գավաթի այս տարվա խաղարկությունում հաղթահարել է առաջին փուլի արգելքը: Ֆուտբոլի հանրապետության առաջնության՝ Կապանում անցկացվող հանդիպումների լավագույն ֆուտբոլիստին պարբերաբար հանձնվել է Կապանի քաղաքապետի սահմանած մրցանակը:

### Կապանի փնտեսության որոշ առանձնահատկությունների մասին

Խոսակցության առանձին նյութ են համայնքի տնտեսության ընդհանուր բնութագիրը, տնտեսության առանձնահատկությունները, որոնցով, ի վերջո, պայմանավորված է բնակչության կենսագործունեությունը: Կապանը, անշուշտ, շարունակում է մնալ Հայաստանի ամենախոշոր տնտեսական կենտրոններից մեկը: Կապանի տնտեսության մեջ շարունակում է գերիշխող տեղ զբաղեցնել հանքարդյունաբերությունը: Եվ այդ ոլորտի երկու խոշոր ձեռնարկությունն են («Զանգեզուրի ՊՄԿ» եւ «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲԸ), որ, մեծ մասամբ, կանխորոշում են տնտեսության մյուս ճյուղերի զարգացումը: Այդ ձեռնարկություններով է գլխավորապես պայմանավորված համայնքի բնակչության կենսամակարդակը: Հանքարդյունաբերական այդ ձեռնարկությունների շնորհիվ է, որ վերջին տարիներին Կապանի տնտեսական քարտեզի վրա առաջ են եկել տնտեսվարող սուբյեկտների նոր անուններ, որոնք արդեն մի քանի տարի շարունակ մշտապես տեղ են զբաղեցնում հանրապետության 1000 խոշոր հարկատուների ցանկում՝ «Վայբլ», «Դեդալ», «Դանեսիա», «Թունել», «Նեմալ», «Վագա գոլդ» եւ այլն: Հանքարդյունաբերական ձեռնարկությունների շարքը 2010-ին համալրեց «Լեռ-էքս» ՍՊԸ-ն:

Հանքարդյունաբերությունից դուրս եւս ձեւավորվել ու ձեւավորվում են համեմատաբար խոշոր ընկերություններ: Այդ առումով հիշատակելի են «Կապան էներժի», «Կապանի ճՇՇ», «Կապանի նորոգշին» ընկերությունները:

Վերը նշված ձեռնարկությունների հետ մեկտեղ Կապանում համեմատաբար խոշոր գործատուներ են նաեւ «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն, «ՎԱՄԱՔՍ» ՍՊԸ-ն, «Թունելագործ» ՍՊԸ-ն, Կապանի բեռնաուղեւորատար տրանսպորտային ձեռնարկությունը եւ կրթության ոլորտի մի շարք հաստատություններ:

Ըստ վիճակագրական տվյալների՝ Կապանի շրջանում 2008թ. եղել է 2083 գործատու (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր), 2012-ին այդ ցուցանիշը դարձել է 2565: 2008-ին նշված գործատուների մոտ աշխատում էր 17679 մարդ, իսկ 2012-ին՝ 16402 մարդ: Սրանք կենսաթոշակային մարմիններում գրանցված պաշտոնական տեղեկություններն են, որոնք, մեղմ ասած, մտահոգիչ են մի քանի առումով:

Վերջին տարիներին Կապանում որոշակի զարգացում են ապրել բանկային համակարգը, սպասարկման ոլորտը եւ հատկապես հյուրանոցային տնտեսությունը, բեռնափոխադրումների ոլորտը (որի գործունեությունը կանոնակարգման կարիք ունի):

Կապանը 1995 թվականից Սյունիքի մարզկենտրոնն է, այստեղ է տեղակայված մարզային հաստատությունների զգալի մասը: Այս հանգամանքով է պայմանավորված մարզային պաշտոնեության առաջացումը, որը նույնպես կարեւոր է բնակչության զբաղվածության առումով:

Ցավոք, վիճակագրության ներկայիս մեթոդիկան թույլ չի տալիս ստույգ թվերով նշել, թե անցած չորս տարում Կապանում քանի աշխատատեղ է ստեղծվել, ինչ կառուցվածք ու ծավալ ունի Կապանի տնտեսությունը:

### Բնակչության զբաղվածությունը

Աշխատանքի եւ սոցիալական ծառայության բնագավառում առկա խնդիրները նույնպես գտնվել են ուշադրության կենտրոնում, թեեւ այդտեղ մեր անելիքները մեծ մասամբ պետության պատվիրակված կամ կամավոր (եւ ոչ պարտադիր) լիազորություններ են:

Անցած չորս տարում Կապանի բնակչությունը կազմել է միջին հաշվով 45 հազար մարդ: Դրանից 10100-ը (միջին հաշվով) կենսաթոշակառու է, մոտ չորս հազարը՝ հաշմանդամ, մոտ չորս հազարը՝ հանրակրթական դպրոցում սովորող, 1925-ը՝ նախակրթական տարիքի երեխա, մոտ 1100-ը՝ բարձրագույն եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորող: Դա նշանակում է, որ բնակչության աշխատունակ մասը մոտ 24 հազար է: Թե նրանցից քանիսն են աշխատանքում ընդգրկված՝ ստույգ չենք կարող ասել, ցավոք, քանզի լիազոր մարմինն ըստ համայնքների այդ վիճակագրությունը չի վարում: Մեր ուսումնասիրությունները, մինչդեռ, ցույց են տալիս, որ զբաղվածության խնդիրը շարունակում է մնալ հրատապ: Աշխատանք չունեցողների թվում առավել մեծ է կանանց տեսակարար կշիռը: Ինչպես նկատեցիք, զբաղվածության ոլորտում, որքան էլ զարմանալի է, ամենամտահոգիչը վիճակագրության դրվածքն է: Արդյունքում՝ այսօր չունենք զբաղված (աշխատող) մարդկանց թվային ստույգ պատկերն ըստ համայնքների: Աշխատանք փնտրողների, աշխատանք փնտրող չզբաղվածների եւ գործազուրկների հաշվառման (զբաղվածության կենտրոն) մեթոդիկան այնպիսին է, որ իրականությունն ու պաշտոնական վիճակագրությունը կապ չունեն միմյանց հետ: Օրինակ, ըստ զբաղվածության կենտրոնի՝ համայնքում գործազուրկների թիվը 2008թ. 3172-ից 2012-ին հասել է 1452-ի, աշխատանք փնտրողների թիվը 2008թ. 3545-ից 2012-ին հասել է 1655-ի, աշխատանք փնտրող չզբաղվածների թիվը 2008թ. 3292-ից 2012-ին հասել է 1586-ի: Ըստ ոլորտի մասնագետների՝ այդ թվերի անընդհատ նվազումը պայմանավորված է գործող օրենսդրության մեջ կատարված փոփոխություններով, ինչպես եւ սոցիալական ակտիվ ծրագրերի (վարձատրությամբ հասարակական աշխատանք) կրճատմամբ: Գործազուրկների համար սահմանված մոտ 18 հազար դրամը բոլորին չէ, որ հասանելի է: Այդ եւ մի շարք այլ պատճառներով զբաղվածություն չունեցող մարդիկ չեն ուզում գրանցվել իբրեւ գործազուրկ, ինչը, վերջին հաշվով, զբաղվածության վերաբերյալ պետական վիճակագրությունը զրկում է իրական հիմքերից: Մենք այդ բացթողմանը լուրջ ուշադրություն կդարձնենք եւ կոնկրետ քայլեր կձեռնարկենք, այլապես մեր զարգացման ծրագրերը հիմնավորվածության առումով թերի կլինեն:

### Աջակցություն սոցիալապես անապահով խավերին

Սոցիալապես անապահով խավերին (հաշմանդամներ, կերակրողին կորցրած ընտանիքներ, կենսաթոշակառուներ, գործազուրկներ) աջակցելն ու նրանց մտահոգություններին ընդառաջ գնալը, կարող եմ ասել, եղել եւ մնում է քաղաքապետարանի ամենօրյա ուշադրության կենտրոնում: Իսկ խոսքն այս դեպքում բնակչության մի պատկառելի հատվածի մասին է՝ 4000-ից ավելի հաշմանդամ, 10062 կենսաթոշակառու… Այդ ոլորտում, անշուշտ, որոշակի դեր է խաղում ընտանեկան նպաստների համակարգը, որում ներկայումս ընդգրկված է 771 ընտանիք: Ի դեպ, ընտանեկան նպաստից օգտվող ընտանիքների թիվը 2008թ. 1246-ից իջել է 475 ընտանիքով: Ոլորտի մասնագետների կարծիքով՝ դա ոչ թե սոցիալապես անապահով ընտանիքների թվի իրական կրճատման արգասիք է, այլ օրենսդրության մեջ կատարված փոփոխության արդյունք, որի համաձայն որոշ չափորոշիչներ փոփոխվել են, թեեւ պահպանվել են կարիքավորության սահմանային միավորները: Քաղաքապետարանը, իր հերթին, իրականացրել է սոցիալական բնույթի մի շարք ծրագրեր, բնակչության առանձին խմբերի տվել ֆինանսական աջակցություն՝ մոտ 100 մլն դրամի չափով (այդ թվում՝ զոհված եւ վիրավոր ազատամարտիկների ընտանիքներին, անապահով խավերի ներկայացուցիչներին, Մեծ հայրենականի վետերանների խորհրդին): Այդ նպատակով օգտագործվել են ոչ միայն համայնքի բյուջեի, այլեւ «Կապան» բարեգործական հիմնադրամի, առեւտրային կազմակերպությունների ու անհատ բարերարների միջոցները:

### Քույր քաղաքների համագործակցություն

Կապանի եւ քույր քաղաքների համագործակցության հիմքերը դրվել են տասը տարի առաջ, ավելի ստույգ՝ 2002թ. դեկտեմբերին, երբ հայաշատ Գլենդելի (ԱՄՆ) քաղաքային խորհուրդը որոշում կայացրեց իրենց համայնքը Կապանի հետ քույր քաղաք հռչակելու մասին: Եղել եմ միության ակունքներում եւ մասնակցել երկու քաղաքի միջեւ կնքվող փաստաթղթերի եւ հուշագրերի ստորագրմանը: Անցած տարիներին մարզկենտրոնում այդ համագործակցության շնորհիվ շոշափելի ծրագրեր են իրականացվել: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը բացասաբար անդրադարձավ այդ համագործակցության վրա: Վերջին չորս տարում գլենդելցի բարերարների հովանավորությամբ վերանորոգումներ են իրականացվել եւ գույքով համալրվել Կապանի NN4 եւ 8 մանկապարտեզները, Կապանի բժշկական կենտրոնին հատկացվել է վեց արկղ բժշկական պարագա: Ամերիկյան կողմը քայլեր է ձեռնարկել մարզկենտրոնում աղբահանության գործը բարելավելու ուղղությամբ: 2010թ. եւ հետո եղան փոխայցելություններ: 2010-ի հոկտեմբերին Կապան էին այցելել «Կապան-Գլենդել» միության հիմնադիր նախագահ Արթին Մանուկյանն ու նորանշանակ նախագահ Խաչիկ Խալաթյանը՝ նպատակ ունենալով ծանոթանալ

Շարունակությունը՝ էջ 12

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

# Ստեղծարար աշխատանքի չորս տարի եւ, իհարկե, հիմնախնդիրներ ու մարտահրավերներ

## Կապանի քաղաքապետ Արտուր Աթայանի հաշվետվությունը համայնքի անդամներին

Սկիզբը՝ էջ 11

ներդրումների ուղղությամբ կատարված աշխատանքներին:

Պատասխան այցը կայացավ 2011թ. փետրվարի 22-28-ը՝ Գլենդելի քաղաքապետ Արա Նաջարյանի հրավերով: Կապանի պատվիրակությունը ծանոթացավ քաղաքապետարանի աշխատանքների կանոնակարգին, կոմունալ տնտեսությանը, ջրամատակարարման, էներգամատակարարման, ֆինանսաբյուջետային համակարգերին: Պաշտոնական հանդիպումներից զատ՝ հանդիպումներ եղան տեղի հայկական համայնքի, Լոս Անջելեսի գլխավոր հյուպատոս Գրիգոր Հովհաննիսյանի հետ: Գլենդելյան հանդիպումների ժամանակ Կապանի պատվիրակությունն ամերիկյան կողմի հետ մշակել է համագործակցության մի այլ տարբերակ, ըստ որի կարեւորը ոչ այնքան ֆինանսական օգնությունն է, որքան փոխշահավետ համագործակցությունը մարզական, մշակութային, կրթական ոլորտներում: Երկու կողմերը համաձայն էին համագործակցության ձեւաչափը փոխելու եւ լուրջ ծրագրեր իրականացնելու խնդրում:

2008թ. դեկտեմբերի 9-ին Կապանի եւ Բելառուսի Հանրապետության Բորիսով քաղաքի միջեւ համագործակցության համաձայնագիր ստորագրվեց: 2012-ի հուլիսի 2-4-ը Կապանի պատվիրակությունը (քաղաքապետ՝ Արտուր Աթայան, նրա խորհրդական՝ Գագիկ Հովհաննիսյան) բելառուսական քաղաքի հիմնադրման 910-ամյակին եւ Բելառուսի Հանրապետության անկախության տոնին նվիրված տոնակատարությունների շրջանակում այցելել է Բորիսով: Կապանի պատվիրակությունը հանդիպել է տեղի հայկական համայնքի ներկայացուցիչների հետ, քննարկվել են երկու քաղաքի համագործակցության խնդիրներ: Մշակութային եւ սպորտի ոլորտներում համագործակցության պայմանավորվածություններ են ձեռք բերվել Բորիսովի համայնքային իշխանությունների հետ: Հոկտեմբերին սպասվում է Բորիսովի պատվիրակության փոխադարձ այցը Կապան, որից հետո կհստակեցվեն ձեռք բերված պայմանավորվածությունները: Դա կլինի բելառուսական կողմի անդրանիկ այցը Կապան:

### Աշխատանք հասարակական կարգի պահպանության եւ պաշտպանության կազմակերպման բնագավառներում

Պաշտպանության կազմակերպման բնագավառում առաջադրված լիազորությունների կատարումը գտնվել է քաղաքապետարանի ուշադրության կենտրոնում: Որոշակի համագործակցություն կա Կապանի քաղաքապետարանի եւ Կապանի զինկոմիսարիատի միջեւ: Համագործակցությունը հատկապես ակտիվ է զորակոչի, զորահավաքի եւ վարժական հավաքի կազմակերպման ընթացքում: Կրթական-մշակութային ծրագրերում պատշաճ տեղ ենք հատկացրել երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությանը: Աջակցել ենք զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանության բարելավմանը, ինչպես եւ զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծմանը: Մշտապես համագործակցել ենք նաեւ Կապանի տարածքում տեղաբաշխված զորամասերի, քաղաքացիական պաշտպանության մարմինների հետ:

Համայնքի տարածքում հասարակական կարգի պահպանությունը, այդ ոլորտում մեր լիազորությունների կատարումը քաղաքապետարանի առաջնայնություններից են եղել: Ոստիկանության բաժնից պարբերաբար ստացել ենք տեղեկատվություն իրավախախտումների մասին եւ դրանից բխող քայլեր ձեռնարկել: Պատշաճ մակարդակի վրա է համագործակցությունն իրավապահ մարմինների տարածաշրջանային եւ մարզային կառույցների հետ: Մեզ առանձնապես մտահոգել են անչափահասների շրջանում կատարվող իրավախախտումներն ու հանցագործությունները, ինչի համար եւ ամենօրյա շփումների մեջ ենք ոստիկանության բաժնի անչափահասների գործերով խորհրդի հետ: Իմիջիայլոց, խոսքը քաղաքի բնակչության մոտ 26%-ի մասին է: Այդ ոլորտում մեր աշխատանքներն ավելի համակարգված դարձնելու համար էր նաեւ, որ 2011թ. հիմնադրեցինք Մանկական կենտրոնը: Այն մատուցում է հոգեբանի, լոգոպեդի, սոցիալական մանկավարժի, սոցիալական աշխատողի, իրավաբանի ծառայություն: Այդ կառույցն արդեն իսկ իր ուրույն տեղն ունի համայնքի կրթադաստիարակչական համակարգում: Բացի երեխաներին սպասարկելուց (մեկ տարում՝ 117 երեխա)՝ կենտրոնը խորհրդատվություն եւ այլ միջոցառումներ է իրականացրել ծնողների շրջանում:

### Պրոֆեսիոնալիզմ, միասնություն եւ համագործակցություն

Մեր ծրագրերի իրականացման գլխավոր երաշխիքներից մեկը, անշուշտ, քաղաքապետարանի աշխատակազմի պրոֆեսիոնալիզմն էր, մարդկանց գործարարությունն ու պատասխանատվության զգացումը հանձնարարված գործի հանդեպ: Հենց այդ որակներն են, որ հնարավորություն են տվել քաղաքապետարանի աշխատակազմին՝ գլխավորելու համայնքային կյանքը: Քաղաքապետարանում գործում են հետեւյալ բաժիններն ու ստորաբաժանումները՝ ընդհանուր բաժին, վարչաիրավական բաժին, ծրագրերի եւ արտաքին կապերի բաժին, ֆինանսաբյուջետային բաժին, եկամուտների հաշվառման եւ հավաքման բաժին, քաղաքաշինության բաժին, քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային ստորաբաժանում: Համայնքի ղեկավարի աշխատակազմում փոփոխություններ են կատարվել 2009 եւ 2010թթ.: Ներկայումս քաղաքապետարանում աշխատում է 85 մարդ (հայեցողական պաշտոններ, համայնքային ծառայողներ, սպասարկող անձնակազմ): 2008թ. այդ թիվն 9-ով պակաս էր: 886 մարդ էլ աշխատում է համայնքի ենթակառույցներում, որից 98-ը նոր ստեղծված աշխատատեղեր են:

Ինչպես նշել ենք տարբեր առիթներով, ելնելով համայնքի կարիքներից՝ անցած չորս տարում կատարվել են նաեւ ենթակառուցվածքային փոփոխություններ: Առհասարակ՝ սկզբից ի վեր կարեւորել ենք քաղաքապետարանի եւ ենթակա ոլորտների օպտիմալ կառավարումը, ինչի համար եւ ենթակառույցների սխեման համապատասխանեցրել ենք քաղաքի ներկայիս կարիքներին: Այսպես՝ 2009-11թթ. համայնքային բյուջետային հիմնարկները վերակազմավորվել եւ դարձել են համայնքային ոչ առեւտրային կազմակերպություններ: Վերակազմավորման արդյունքում ստեղծվել են «Ակումբագրադարանային միավորում» ՀՈԱԿ-ը, վթարային-վերանորոգման ծառայությունը, ստեղծվել են «Շ.Մովսիսյանի անվան պատմության թանգարան» եւ «Մանկական կենտրոն» ՀՈԱԿ-ները: 2011թ. լուծարման գործընթաց է սկսվել 1997-2008թթ. ստեղծված եւ գործունեությունը դադարեցրած համայնքային առեւտրային կազմակերպություններում, «Կապանի ջերմամատակարարում» եւ «Կապանի կոմունալ սպասարկում» ՓԲԸ-ներում: «Կապանի կոմունալ ծառայություն» եւ «Կապանի սանիտարական սպասարկում» կազմակերպությունների միավորմամբ ստեղծվել է «Կապանի կոմունալ ծառայություն» ՀԲՀ-ն:

Անցած ժամանակաշրջանում համայնքում ժողովրդի իշխանությունն իրականացնելու եւ համայնքային խնդիրները լուծելու գործում մեծ է եղել քաղաքի ներկայացուցչական մարմնի՝ ավագանու դերը: Պարբերաբար գումարվող նիստերից (գումարվել է 39 նիստ), քաղաքի առավել հրատապ հարցերը քննարկելուց (քննարկվել է շուրջ 500 հարց) զատ՝ ավագանու անդամների հետ մշտական կապի մեջ ենք եղել, նրանց առաջարկությունները, դիտողությունները դարձրել քննարկման առարկա: Կարող եմ ասել՝ ավագանին գործող օրենքների շրջանակում կատարել է իր առաքելությունը:

### Հանրության հետ կապեր, քաղաքացիների շահերի պաշտպանություն

Ինչպես արդեն նշել ենք, տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունը տեղական ինքնակառավարման սկզբունքներից են, ինչը նկատի ենք ունեցել պաշտոնավարման ամբողջ ընթացքում: Նախ՝ 2011թ. նոյեմբերին ստեղծել ենք քաղաքապետարանի համացանցային՝ նոր սերնդի կայքը (www.kapan.am), որի միջոցով պարբերաբար հանրությանը տեղեկացնում ենք քաղաքապետարանի գործունեության, կատարվող աշխատանքների, ավագանու ընդունած որոշումների, դիմումների ընթացքի մասին: Երկրորդ՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հոդված 9-ի 8-րդ կետը՝ առնվազն տարեկան մեկ անգամ ամբողջական հաշվետվություն ենք ներկայացրել համայնքի բնակչությանը՝ օգտագործելով լրատվամիջոցների հնարավորությունը: Սերտ համագործակցության մեջ ենք եղել քաղաքի երկու հեռուստաընկերության («Խուստուփ-TV», «Սոսի»), ինչպես եւ «Սյունյաց երկիր» թերթի հետ: Առավել կարեւոր հարցերի վերաբերյալ պարբերաբար տարածել ենք մամուլի հաղորդագրություններ: Կապանի քաղաքապետի գործունեությանը քանիցս անդրադարձել են մայրաքաղաքային լրատվամիջոցները: Իսկ «Յունիթայմ» ամսագիրը 2010թ. արդյունքներով տարվա մարդ է ճանաչել Կապանի քաղաքապետին: 2009թ. քաղաքի 16 տարբեր մասերում տեղադրվել է «Համայնքային լրատու» վահանակը, որի վրա պարբերաբար փակցվել են քաղաքապետի, ավագանու որոշումները, քաղաքապետարանի հայտարարությունները եւ հանրությանը հետաքրքրող այլ փաստաթղթեր:

Հասարակություն-քաղաքապետարան առնչություններում կարեւոր բաղադրիչ է քաղաքացիների կողմից քաղաքապետին հղած դիմումների պատկերը: Չորս տարում մոտ 2000 դիմում է ընդունվել քաղաքապետարան (ընդ որում՝ տարեցտարի աճել է դիմումների թիվը, ինչը եւս մեկ անգամ վկայում է բնակչության եւ քաղաքապետարանի կապերի մասին): Ընդունված դիմումների մեջ մեծ տեղ են գրավում դրամական օգնությունների, վարձավճարների զեղչի, ուսման վարձի վերաբերյալ դիմումները: Կանոնավոր կազմակերպվել է քաղաքացիների ընդունելություն՝ ամսական առնվազն երկու անգամ պարբերականությամբ: Միայն այս տարվա առաջին կիսամյակում ընդունել ենք 157 քաղաքացու եւ օրենքով սահմանված կարգով քննության առել նրանց առաջարկությունները, դիմումներն ու բողոքները, ձեռնարկել միջոցառումներ:

Կազմակերպվել է քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեությունը:

Քաղաքապետարանի իրավասության շրջանակներում միջոցներ ենք ձեռնարկել համայնքի բնակիչների իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու համար:

### Համայնքի առջեւ ծառացած հիմնախնդիրները

Հաշվետվություն ներկայացնելիս ավանդաբար հպանցիկ անդրադարձ է կատարվում հիմնախնդիրներին: Այսօր, քանի որ խոսքը չորս տարվա արդյունքների մասին է, եւ կանգնած ենք Կապանի հետագա ընթացքի վերաբերյալ նոր ծրագրեր մշակելու անհրաժեշտության առջեւ, նպատակ ունեմ անդրադառնալ համայնքի առջեւ ծառացած առավել մտահոգիչ մի քանի խնդրի եւս, որոնք, կարելի է ասել, լուրջ մարտահրավեր են Կապանին, որոնց դիմագրավմանը միտված քայլերը պետք է դրվեն մեր ծրագրերի հիմքում:

**Առաջին հարցը Կապանի ժողովրդագրական վապթարացող վիճակն է:** Արտաքուստ ամեն ինչ այդ ոլորտում կայուն է: Քաղաքի բնակչության թիվը, ինչպես 2008-ի հունվարի 1-ին, այնպես էլ հետագա տարիներին եւ 2012-ի հունվարի 1-ին, 45500 է: Դա՝ ըստ պաշտոնական վիճակագրության: Կապան քաղաքի հանրակրթական դպրոցների աշակերտների թիվն էլ, կարծեք, դանդաղորեն վերադառնում է նախկին տեսքին՝ 2008թ.՝ 3529, 2009թ.՝ 3285, 2010թ.՝ 3190, 2011թ.՝ 3049, 2012թ. (նախնական տվյալներով)՝ 3362: Հանրակրթական դպրոցների 1-ին դասարան հաճախող երեխաների թիվն էլ, ըստ էության, աճ է ունեցել վերջին տարիներին՝ 2008թ.՝ 316, 2009թ.՝ 421, 2010թ.՝ 430, 2011թ.՝ 437, 2012թ. (նախնական տվյալներով)՝ 490 (հանրակրթական դպրոցներին առնչվող վիճակագրության մեջ ներառված չեն քաղաքի 2 ավագ դպրոցի եւ N3 հատուկ կրթահամալիրի թվերը): Մահացության ցուցանիշն էլ ցածր է միջին մարզայինից՝ 2008թ.՝ 429 մարդ (6,2 պրոմիլե), 2009թ.՝ 449 մարդ (6,6 պրոմիլե), 2010թ.՝ 426 մարդ (6,2 պրոմիլե), 2011թ.՝ 422 մարդ (6,4 պրոմիլե), 2012թ. 1-ին կիսամյակ՝ 180 մարդ (կանխատեսվող պրոմիլեն՝ 6,9): Բայց եթե ասում ենք, որ մահացությունը համեմատաբար ցածր է Կապանում, ապա դա ավելի շատ պայմանավորված է մարզի գյուղական բնակչության մեջ ծերացածության բարձր մակարդակով: Ծնելիության ցուցանիշում, սակայն, նահանջը նկատելի է՝ 2008թ.՝ 523 (9,2 պրոմիլե), 2009թ.՝ 522 (9,2 պրոմիլե), 2010թ.՝ 485 (8,3 պրոմիլե), 2011թ.՝ 441 (8,3 պրոմիլե), 2012թ. 1-ին կիսամյակ՝ 246: Դա էլ իր հերթին բացասաբար է անդրադարձել համայնքի բնակչության բնական աճին՝ 2008թ.՝ 3,0 պրոմիլե, 2009թ.՝ 3,1 պրոմիլե, 2010թ.՝ 1,9 պրոմիլե, 2011թ.՝ 1,9 պրոմիլե: Բերված թվերը վկայում են, որ ծնելիությունը Կապանում ավելի ցածր է, քան մարզի միջինն է (11,5 պրոմիլե): Նկատելի են նաեւ բնակչության աճի տեմպերի անկումը (անկման տեմպն էլ մարզի միջինից բարձր է), հաշմանդամների թվաքանակի արագընթաց աճը (պաշտոնական տվյալներով բնակչության մոտ 10%-ը հաշմանդամ է): Եվ եթե այդ ամենին գումարենք քաղաքից արտագաղթի վերաբերյալ պաշտոնական տվյալների բացակայությունը, ինչպես եւ շրջանի գյուղերից երիտասարդների՝ դեպի Կապան չընդհատվող ներհոսքի ռեալ պատկերի բացակայությունը, ապա պարզ կդառնա, որ Կապան քաղաքում առնվազն գործ ունենք ծնելիության ցածր տեմպերի ու բնակչության բնական աճի տեմպի անկման իրողության հետ, ինչը, շարունակվե-



Լուսանկարը՝ Մելիք Բաղդասարյանի

Կապանի քաղաքապետարանի շենքը:

ԱՂՅՈՒՍԱԿ 4

## Մարզադպրոցների մասնակցությունը մրցումներին՝ ըստ տարիների

| N/N | Աթլետիկայի մարզադպրոց | | Մարմնամարզության մարզադպրոց | | Մանկապատանեկան մարզադպրոց | | Շախմատ (ՄՊՍԿ) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Մրցումների թիվը | Ծախսված գումարը (հազար դրամ) | Մրցումների թիվը | Ծախսված գումարը (հազ.դրամ) | Մրցումների թիվը | Ծախսված գումարը (հազ.դրամ) | Մրցումների թիվը | Ծախսված գումարը (հազ.դրամ) |
| 2009թ. | 16 | 2,500 | 6 | 995 | 4 | 574 | 2 | 200 |
| 2010թ. | 14 | 3,277 | 5 | 641 | 12 | 1,422 | 3 | 215 |
| 2011թ. | 13 | 2,691 | 4 | 711 | 4 | 643 | 2 | 200 |
| 2012թ. | 10 | 1,832 | 2 | 728 | 3 | 866 | 3 | 237 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 53 | 10,300 | 17 | 3,329 | 23 | 3,505 | 10 | 852 |

լու դեպքում, լուրջ սպառնալիք կլինի Կապանի ժողովրդագրական դրությանը: Իրավիճակն ավելի է սրվում, երբ իմանում ենք, որ Կապանում գերիշխող մի քանի հիվանդություններ ոչ միայն չեն նահանջում, այլեւ, որոշ դեպքերում, ծավալվում են՝ սիրտ-անոթային անբավարարություն (երեք տարում մոտ երեք անգամ ավելացել են առաջնային հիվանդները), օնկոլոգիական եւ էնդոկրին (ներզատական):

**Մտահոգիչ են բնապահպանական մարտահրավերները:** Համայնքում լուրջ տագնապ կա շրջանի տարածքում հանքարդյունաբերության հախուռն զարգացման, Շահումյանի անվան հանքավայրում բաց արդյունահանման հեռանկարի, քաղաքը շրջապատող պոչամբարների պահպանության, ուրանի ուղղությամբ կատարվող որոնողական աշխատանքների, Ողջի եւ Գեղի գետերի ավազաններում տեղի ունեցող զարգացումների, Կապանի կենտրոնական հանքավայրի կոնսերվացման որակի եւ այլ հարցերի առնչությամբ: Եվ այդ զարգացումները երբեմն հանրային ամենաասուր դրսեւորումներ են ունեցել. հանրահավաք, ստորագրահավաքներ, հորատող հաստոցի հրկիզում… Տագնապները խորանում են: Կապանի քաղաքային իշխանությունն այդ հարցերում միշտ եղել է համայնքի բնակչության հետ: Եվ հիմա հասել ենք մի հանգրվան, որ յուրաքանչյուր հարցի վերաբերյալ պետք է ունենանք կոնկրետ ու գիտականորեն հիմնավորված պատասխան՝ դրանից բխող հստակ անելիքներով: Հակառակ դեպքում բնապահպանական մարտահրավերները կարող են եւ ճակատագրական լինել Կապանի համար:

**Իր ամբողջ սրությամբ օրակարգ է մտել Կապանի խմելու ջրին սպառնացող վտանգը:** Նկատի ունենք Գեղիի ծորում՝քաղաքի խմելու ջրի ջրահավաք ավազանում ընդերքօգտագործման ու փոքր հզորության հէկերի գործունեության փաստը, նաեւ նոր հէկերի տեղադրման ուղղությամբ աշխատանքները, եւ դրանց անդրադարձը խմելու ջրի որակին: Այդ հարցում ակնկալում ենք հանրապետության էներգետիկայի եւ բնական պաշարների, ինչպես եւ բնապահպանության նախարարությունների, «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ու հանրապետության ջրտնտեսկոմի պարզաբանումները:

**Համայնքի բնակիչների՝ առանց չափազանցության ամենօրյա մտահոգություններից են սննդի անվտանգության ոլորտում եւ առաջին անհրաժեշտության ապրանքների ու հատկապես սննդի, առավելապես՝ հացի շուկայում տիրող քաոսային վիճակը, գների՝ շատ հաճախ չհիմնավորված ու կամայական բարձրացումները:** Այդ ամենը շատ թանկ է նստում մարդկանց վրա, յուրաքանչյուրին մղում հուսահատության, վաղվա օրվա հանդեպ՝ անորոշության: Ճիշտ է, այդ եւ բազում հարցեր դուրս են տեղական ինքնակառավարման մարմինների իրավասության շրջանակից, բայց պետք է համապատասխան գերատեսչությունների հետ գտնել ձեւը եւ առկա հարցերը կարգավորել: Իսկ գյուղնախարարության համապատասխան կառույցը, որ կոչված է սննդամթերքի անվտանգության պետական հսկողություն իրականացնել, պետք է, ի վերջո, դուրս գա թմբիրից եւ անցնի իր պարտականությունների՝ գոնե նվազագույն չափով կատարմանը:

**Ունենք նաեւ համայնքային մի կարեւոր ծրագրի փապալման փաստ, որը, ի վերջո, պետք է շտկվի, քանի որ քաղաքի այդ հատվածում ստեղծված աննորմալ վիճակը չի կարող երկար շարունակվել:** Խոսքը երիտասարդ ընտանիքների համար շենքային համալիրի կառուցման ծրագրի մասին է, որ հռչակվեց 2010թ. հոկտեմբերի 15-ին: Երբեմնի «Բաղաբերդ» ռեստորանի մերձակայքում «Աջակցություն երիտասարդ ընտանիքների բնակարանաշինությանը» ծրագրի շրջանակներում «ԵՊՀ շրջանավարտների միավորում» ՀԿ-ն պետք է կառուցեր բնակելի 3 մասնաշենք՝ 335 բնակարանով: Այս տարվա նոյեմբերի 30-ին պետք է ավարտվեր 1-ին մասնաշենքի կառուցումը: 2-րդ եւ 3-րդ մասնաշենքերի կառուցումը պետք է մեկնարկեր 2011-ին եւ ավարտվեր 2013-ի փետրվարին: 7,6 մլրդ դրամ արժողությամբ այդ ծրագիրը մնացել է թղթի վրա, իսկ հատկացված տարածքը հիմա ավերակների կույտ է…

**Արդեն նշեցինք, որ համայնքի քաղաքաշինության եւ կոմունալ տնտեսության ոլորտում բախվել ենք մի քանի հիմնախնդրի:** Նախ՝ վերջին մոտ 20 տարում Կապանում չի իրականացվել բազմաբնակարան բնակելի որեւէ շենքի շինարարություն: Մինչդեռ այսօր համայնքում մոտ 2000 ընտանիք ունի բնակարանի կարիք: Միայն այդ փաստը ցույց է տալիս, որ երիտասարդության բնագավառում մեր կողմից իրականացված եւ իրականացվող քաղաքականությունը չի կարող սպասելի արդյունք տալ: Կապանը չունի մաքրման կայան, չունի ժամանակակից պահանջներին համապատասխանող աղբավայր, դեռեւս նորմալ աղբահանություն չի կազմակերպվում բանավաններից: Հունան Ավետիսյան փողոցի ամբողջ երկարությամբ կոյուղու կոլեկտորի վերակառուցման խնդիրը հասունացել է շատ վաղուց, ինչը վկայում են այնտեղ պարբերաբար տեղի ունեցող եւ բնակչությանն անհարմարություններ պատճառող վթարները: Օրակարգում են քաղաքի ջրամատակարարման արտաքին համակարգի բարելավումը, ներքին ցանցի ուղղությամբ կատարված աշխատանքների շարունակումը: Օրակարգում է քաղաքային նոր գերեզմանատան հարցը, գործող գերեզմանատան՝ ավտոմայրուղու հատվածի պարսպապատումը: Օրախնդիր է Մեղրի-Կապան ավտոմայրուղու շրջանցիկ ճանապարհի կառուցումը:

**Կարեւոր խնդիր է մնում մայրաքաղաքից հեռու գտնվելու հանգամանքը, որ մի քանի տեսակետից բացասաբար է անդրադառնում համայնքի կենսագործունեությանը:** Տեսանելի ելքերից մեկը Կապանի օդակայանի վերագործարկումն է, ինչի համար կան համապատասխան պայմաններ եւ պահանջարկ:

**Անցած չորսամյա ուղին, մեր կյանքում տեղի ունեցող փոփոխությունները, համայնքի կարիքների հանդեպ նոր մոտեցումների անհրաժեշտությունը մեզ կանգնեցրել են նաեւ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու հրամայականի առջեւ:** Բազմաթիվ հարցերում ՏԻՄ իրավունքներն ու լիազորություններն առավել հստակեցնելու, առավել կոնկրետացնելու կարիք ունեն: Հատկապես հստակեցման կարիք ունեն տեղական ինքնակառավարման մարմինների եւ գործադիր իշխանության տեղական կառույցների հարաբերությունները: Համայնքային իշխանությունը, մեր խորին համոզմամբ, պետք է հստակ լիազորություններ ունենա համայնքի բնակչության շահերին առնչվող ամեն մի ոլորտում, այլապես ՏԻՄ-երը համայնքային կյանքի որոշ հարցերում կմնան (ինչպես եւ կան) կողքից հայեցողի, անօգնական կառույցի դերում, ինչը, մեծ իմաստով, հակասում է տեղական ինքնակառավարման սկզբունքներին:

*Ահա այսքանը, որ կամեցա ասել իմ հաշվետվության մեջ: Բնականաբար, ամեն ինչ չէ, որ կարողացա զետեղել փաստաթղթում: Անհրաժեշտության դեպքում մարդիկ իրենց հետաքրքրող առանձին հարցերի վերաբերյալ կարող են հավելյալ տեղեկատվություն ստանալ քաղաքապետարանի աշխատակազմից: Բայց ասվածն էլ բավարար է՝ տեսնելու, համոզվելու համար, որ առկա հիմնախնդիրների ու մարտահրավերների դեպքում անգամ չորս տարին Կապանի համար եղել է ստեղծարար աշխատանքի ժամանակաշրջան: Դրա համար, օգտվելով առիթից, նախեւառաջ երախտագիտություն եմ հայտնում բոլոր կապանցիներին՝ ինձ հավատալու եւ աջակցելու համար: Շնորհակալություն եմ հայտնում պետական, հասարակական-քաղաքական կառույցներին, տնտեսվարող սուբյեկտներին, որոնք մասնակցություն են ունեցել համայնքի բնականոն առօրյայի ապահովմանն ու ծառացած խնդիրների լուծմանը: Իհարկե, եղել են նաեւ թերացումներ, բացթողումներ, որոնց համար, իբրեւ պատճառ, չեմ ուզում արդարանալ եւ վկայակոչել ֆինանսատնտեսական հայտնի ճգնաժամը, երկրի սոցիալ-տնտեսական դժվարությունները, ինչպես ընդունված է ասել: Բացթողումների եւ թերությունների համար առաջին հերթին պատասխանատու եմ ինքս: Սույն հաշվետվության մեջ կատարված վերլուծությունները նաեւ ցույց են տալիս, թե ինչպիսի լուրջ հիմնախնդիրներ կան համայնքում: Դրանց վերաբերյալ մտորումներս որոշ չափով արտահայտեցի, բայց ավելի կոնկրետ՝ լուծումների առումով, կխոսեմ իմ նախընտրական ծրագրում:*

*Համոզված եմ, որ կատարվածը, ինչպես եւ առկա հիմնախնդիրների գիտակցումն ու դրանք լուծելու կամքն ու վճռականությունն այն բազիսն են, որոնց վրա կկառուցվի առաջիկա տարիների մեր համատեղ գործը:*

■

# Կապանի քաղաքապետի թեկնածու Արտուր Աթայանի նախընտրական ծրագրի հիմնադրույթները

**Կապանն ապրում է իր պատմության ամենավճռական փուլերից մեկը, ինչը պայմանավորված է համայնքի առջեւ ծառացած հիմնախնդիրներով ու համայնքին նետված մարտահրավերներով: Այդ մարտահրավերներին դիմագրավելու, ծառացած խնդիրները լուծելու գործում մեծագույն եւ անփոխարինելի դերը պատկանում է համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններին եւ մասնավորապես համայնքի ղեկավարին, ինչի համար եւ կարեւորում ենք սեպտեմբերի 9-ի ընտրությունների ազատ եւ արդար անցկացումը: Եվ որպեսզի քաղաքապետը կարողանա կատարել իր առաքելությունն ու կարողանա առաջնորդել համայնքի բնակչությանը, ապա պետք է ընտրված լինի համայնքի ընտրողների կողմից՝ առանց այլեւայլ միջամտության: Միայն այդպիսի ճանապարհով, բնակչության ազատ կամարտահայտությամբ ընտրված քաղաքապետը կարող է օժտված լինել քաղաքական ու բարոյական անհրաժեշտ ռեսուրսով:**

Կապանում այսօր առկա են լուծման ենթակա բազմաթիվ խնդիրներ, Կապանին սպառնում են մի շարք մարտահրավերներ: Անկեղծ չէր լինի, եթե ասեինք, որ առաջիկա չորս տարում դրանք կլուծենք ամբողջապես: Այդ խնդիրների, մարտահրավերների կողքին կան նաեւ այլ իրողություններ. Կապանը հարավարեւելյան Հայաստանի ամենախոշոր քաղաքն է, տարածաշրջանային կենտրոն է եւ հաղորդակցության ուղիների հանգույց, Կապանը երկրի հանքարդյունաբերության մայրաքաղաքն է եւ, ի վերջո, ռազմավարական անզուգական հանգրվան Հայաստանի հարավում:

Այդ ամենը հաշվի առնելով՝ կամենում ենք առանձնացնել առաջնահերթությունները, որոնք գալիք չորս տարում կգտնվեն համայնքային իշխանության ուշադրության կենտրոնում:

- Նախեւառաջ՝ քաղաքապետարանի գործունակ աշխատակազմ՝ համալրված պրոֆեսիոնալներով, կառավարման արդի մեթոդներին ու առանձնահատկություններին տիրապետող ու բարձրակարգ մասնագետներով, Կապանը սիրող, Կապանի շահն անձնականից վեր դասող, որեւէ նախապաշարումով ու պայմանականությունով չկաշկանդված, առաջադեմ աշխարհայեցողությամբ, նորը, առաջավորը տեսնել կարողացող կադրերով:
- Համերաշխության, հանդուրժողականության, փոխադարձ հարգանքի մթնոլորտ: Անկախ քաղաքական հայացքներից՝ համայնքի բնակիչներն ունեն առնվազն մեկ միավորող առանցք՝ մեր սիրելի Կապանը, նրա ընդհանրական շահը: Այդ առանցքի շուրջ էլ պետք է լինի համայնքի բնակչության համախմբումը: Մնացած հարցերում կարող ենք եւ տարակարծություններ ունենալ:
- Աջակցություն քաղաքացիական հասարակության հետագա ձեւավորմանը, համայնքի բնակիչների շահերի պաշտպանություն, քաղաքապետարանի գործունեության եւ քաղաքին առնչվող հարցերի լուծման ուղղությամբ կատարվող աշխատանքների հրապարակայնություն եւ թափանցիկություն, բացախոսության եւ բազմակարծության մթնոլորտի ապահովում:
- Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության գլխավոր երաշխիքներից մեկը համայնքի բնակիչների հավատն ու վստահությունն է քաղաքապետի ու քաղաքապետարանի հանդեպ: Ելնելով դրանից՝ հնարավորինս ակտիվացնել համայնքի անդամների մասնակցությունը ՏԻՄ-ին առնչվող հարցերի եւ առհասարակ համայնքային խնդիրների քննարկմանն ու լուծմանը: Քաղաքապետարանում արմատապես փոխել քաղաքացիների դիմումների հետ տարվող աշխատանքը, սահմանված ժամկետներում եւ պատշաճ ձեւով դիմումներին հիմնավոր պատասխանելը համարել քաղաքապետարանի աշխատակազմի առաջնահերթ խնդիրներից մեկը: Համայնքին առնչվող առավել կարեւոր հարցերի շուրջ կազմակերպել հանրային քննարկումներ: Ստեղծել հավելյալ պայմաններ քաղաքական ուժերի, հասարակական կազմակերպությունների տեղական կառույցների անկաշկանդ գործունեության համար, նրանց ներկայացուցիչների հետ պարբերաբար կազմակերպել հանդիպումներ՝ համաքաղաքային խնդիրների քննարկման նպատակով:
- Ապահովել համայնքային բյուջեի հետագա դինամիկ աճը եւ սեփական մուտքերի հավաքումը մշտապես հասցնել 100%-ի: Համայնքային բյուջեի եկամտային մասի սեփական մուտքերի ծավալների աճն ապահովելու նպատակով ավելի արդյունավետ օգտագործել համայնքի հնարավորությունները: Քաղաքի առջեւ ծառացած խնդիրները լուծելու համար այսուհետ եւս հայթայթել ֆինանսավորման հավելյալ աղբյուրներ:
- Սոցիալական արդարությունը եղել եւ մնում է պետության, իշխանության գրեթե բոլոր օղակների հանդեպ բնակչության հավատի եւ վստահության ամենագլխավոր աղբյուրը: Հանրապետական գերատեսչությունների տեղական ծառայությունների հետ խնդրո առարկային առնչվող հարցերը մշտապես պահել ուշադրության կենտրոնում:
- Ընտրատարածքն ԱԺ-ում ներկայացնող պատգամավորների հետ մշակել առաջարկությունների փաթեթ «Տեղական ինքնակառավարման մասին» եւ «Համատիրությունների մասին» ՀՀ օրենքներում փոփոխություն կատարելու մասին՝ ելնելով վերջին տարիների աշխատանքի փորձից:
- Մայրաքաղաքի հետ կապն ավելի ինտենսիվ դարձնելու նպատակով վերագործարկել Կապանի օդակայանը, ինչը դրականորեն կանդրադառնա մարզկենտրոնի կենսագործունեությանը: Այդ նպատակով պատկան մարմինների հետ մշակել եւ իրագործել համապատասխան քայլեր:
- Հետամուտ լինել, որ Հյուսիս-հարավ ավտոմայրուղու կառուցման ազգային ծրագրի շրջանակներում իրականություն դառնա նաեւ Մեղրի-Կապան ճանապարհի՝ Կապանը շրջանցող ավտոխճուղու պատրաստումը:
- «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի հետ բանակցություններ վարել Յունան Ավետիսյան փողոցի ամբողջ երկարությամբ կոյուղու կոլեկտորի վերակառուցման շուրջ: Այդ ընկերության հետ շարունակել իրականացնել նախկինում ձեռք բերված պայմանավորվածությունները ջրամատակարարման ներքին ցանցի վերակառուցման ուղղությամբ: Բանակցել նաեւ Կապանում մաքրման կայանի նախագծման ու կառուցման հարցերի շուրջ:
- Քննարկման առարկա դարձնել եւ լուծել քաղաքային նոր գերեզմանատան հարցը, պարսպապատել գործող գերեզմանատան՝ ավտոմայրուղու հարակից հատվածը:
- Համապատասխան գերատեսչությունների քննարկման առարկա դարձնել համայնքի՝ ժամանակակից պահանջներին համահունչ աղբավայրի կառուցման հարցը: Համակարգված ձեւով աղբահանություն իրականացնել նաեւ քաղաքի բանավաններում:
- Կապանի, ինչպես եւ ցանկացած համայնքի զարգացման գլխավոր եւ անշրջանցելի պայմաններից է երիտասարդության հետ տարվող աշխատանքը: Ուստիեւ՝ քաղաքապետարանի աշխատակազմում ավելի հստակեցնել այդ բնագավառի կառավարումը: Մշակել երիտասարդական քաղաքականության նոր հայեցակարգ: Երիտասարդության ռազմահայրենասիրական ու ֆիզիկական դաստիարակություն, զբաղվածության խնդրի կարգավորում, ազատ ժամանակի եւ հանգստի խելամիտ կազմակերպում, երիտասարդ ընտանիքների հիմնախնդիրների լուծում, մոր եւ մանկան առողջության պահպանման ոլորտում բարենպաստ պայմանների ստեղծում, տաղանդավոր դպրոցականների եւ ուսանողների կրթության հովանավորում, սպորտային ու մարզական ոլորտի հետագա զարգացում, մայրաքաղաք եւ արտերկիր ուսման մեկնած պատանիների եւ աղջիկների ճակատագրի հանդեպ հետաքրքրության ցուցաբերում... Ահա այս եւ բազմաթիվ նման հարցերը կկազմեն երիտասարդական քաղաքականության բովանդակությունը:
- «ԵՊՀ շրջանավարտների միավորում» ՀԿ-ի հետ քննարկել «Աջակցություն երիտասարդ ընտանիքների բնակարանաշինությանը» ծրագրի շրջանակներում Կապանում կառուցվելիք բնակելի երեք մասնաշենքի ճակատագիրը, ինչպես եւ երբեմնի «Բաղաբերդ» ռեստորանի մեր-

## ԽՈՍՔ ԵՎ ԳՈՐԾ ■ ԿԱՊԱՆՑԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐՆ ԱՄԱՌԱՅԻՆ ՃԱՄԲԱՐՈՒՄ









# Լինենք արժանավայել կապանցուն

ճակայքում ստեղծված անհարմար վիճակի հարցը:

- ՀՀ գյուղնախարարության համապատասխան ստորաբաժանման եւ պետական մյուս կառույցների հետ համատեղ ուշադրության կենտրոնում պահել սննդի անվտանգության ոլորտում եւ առաջին անհրաժեշտության ապրանքների ու հատկապես սննդի, առավելապես՝ հացի շուկայում տիրող վիճակը, ժամանակ առ ժամանակ արձագանքել զարգացումներին եւ դրանից բխող քայլեր ձեռնարկել:
- «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի, հանրապետության ջրտնտպետկոմի, ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների ու բնապահպանության նախարարությունների հետ համատեղ քննարկել Գեղիի ձորում՝ Կապանի խմելու ջրի ջրահավաք ավազանում, ստեղծված նոր իրողությունները եւ կոնկրետ գործողություններով կասեցնել դրանց հնարավոր անդրադարձը խմելու ջրի որակի վրա:
- Կապանում ժողովրդագրական դրության բարելավման եւ բնապահպանական ոլորտին սպառնացող մարտահրավերներին դիմագրավելու վերաբերյալ մշակել առաջնահերթ միջոցառումների ծրագիր եւ ներկայացնել ՀՀ կառավարությանը՝ նկատի ունենալով, որ այդ հարցերը համայնքի ուժերով հնարավոր չէ լուծել, որ դրանք կարելի է լուծել միայն հանրապետական գերատեսչությունների ու նախարարությունների միջոցով: Մինչ այդ առաջարկում ենք «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲԸ-ին համայնքի բնակչությանը ներկայացնել զեկույց՝ Շահումյանի անվան հանքավայրում տեղի ունեցող գործընթացների մասին:
- Հոգեւոր-մշակութային ավանդույթների պահպանումն ու հարստացումը Կապանի հետագա զարգացման հիմնարար ուղղություններից են: Այդ նպատակով ավելի ակտիվացնել քաղաքի մշակութային հաստատությունների գործունեությունը՝ աջակցելով նրանց նյութատեխնիկական բազայի արդիականացմանը, մասնագետ կադրերով ապահովմանը:
- Պաշտպանել տնտեսվարող սուբյեկտների օրինական շահերը, նպաստել տնտեսության մեջ առաջընթացի ապահովմանը: Խրախուսել փոքր եւ միջին բիզնեսի ոլորտում ցանկացած դրական նախաձեռնություն եւ ցույց տալ համապատասխան աջակցություն: Տնտեսության մեջ իբրեւ գլխավոր առաջնայնություն համարել նոր աշխատատեղերի ստեղծումը: Քաղաքում ներդրումների համար ստեղծել բարենպաստ ու գրավիչ պայմաններ, քաջալերել ներդրումները:
  Գործընկերային առանձնահատուկ հարաբերություններ պահպանել «Դինո գոլդ մայնինգ քամփնի» եւ «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերությունների հետ՝ հաշվի առնելով նրանց բացառիկ դերը համայնքի սոցիալ-տնտեսական եւ հոգեւոր-մշակութային կյանքում:
- Այսուհետ եւս հետամուտ լինել զոհված ու վիրավոր ազատամարտիկների ընտանիքների սոցիալական պայմանների բարելավմանը: Ուշադրության կենտրոնում պահել քաղաքում տեղակայված բանակային ստորաբաժանումների, նրանցում ընդգրկված սպայական անձնակազմի ընտանիքների սոցիալական, հոգեւոր-մշակութային հոգսերը:
- Շարունակել առողջապահական համակարգի շենքային պայմանների բարելավման հարցում նախորդ տարիներին սկիզբ առած աջակցության քայլերը, հնարավոր բոլոր միջոցներով նպաստել բուժսպասարկման որակի բարելավմանը: Պետական համապատասխան մարմինների հետ որոշակիություն մտցնել ծննդատան շենքի կարգավիճակում:
- Կրթական համակարգի (մանկապարտեզներ, արվեստի եւ գեղարվեստի դպրոցներ, մարզադպրոցներ, հանրակրթական դպրոցներ, միջին մասնագիտական եւ բուհական հաստատություններ) կազմակերպությունների հիմնախնդիրները պահել ուշադրության կենտրոնում, աջակցել դրանց գործունեության արդյունավետության բարձրացմանը: Նոր մանկապարտեզների հիմնադրմամբ կամ եղածների ընդլայնմամբ ստեղծել պայմաններ, որ համայնքի նախակրթական տարիքի բոլոր երեխաները մանկապարտեզում ընդգրկվելու հնարավորություն ունենան:
- Գործող օրենքների սահմաններում ուժեղացնել հանրային հսկողությունն իրավապահ մարմինների գործունեության հանդեպ: Հասարակական կարգի եւ առհասարակ իրավակարգի ամրապնդման նպատակով համագործակցել դրանում շահագրգիռ բոլոր կազմակերպությունների հետ:
- Շարունակել միջազգային կառույցների տեղական գրասենյակների հետ համագործակցությունը, հետամուտ լինել գործող ծրագրերի մինչեւ վերջ եւ որակյալ կատարմանը: Քույր քաղաքների հետ համագործակցությունն այսուհետ եւս համարել քաղաքապետարանի գործունեության առաջնայնություններից մեկը:
- Քաղաքի ճարտարապետական դեմքի անաղարտ պահպանումը, ազգային նկարագրի հետագա խորացումը համարել քաղաքապետարանի քաղաքաշինական գործունեության հիմնարար ուղղություններից մեկը: Համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը եւ քաղաքաշինական մյուս փաստաթղթերը համապատասխանեցնել այդ խնդրին: Քաղաքաշինական ընթացքին հետեւելու եւ կամայականություններն ու սուբյեկտիվ լուծումներն այդ ոլորտում բացառելու համար քաղաքապետին կից ստեղծել քաղաքաշինական (ճարտարապետական) խորհուրդ՝ քաղաքի, նաեւ հանրապետության ճանաչված մասնագետների մասնակցությամբ:
- Ավարտին հասցնել քաղաքի գլխավոր հատակագծում փոփոխություններ կատարելու վերաբերյալ սկսված աշխատանքը, ճշտել համայնքի հողերի նպատակային նշանակությունը, ավարտել հողերի գոտիավորումը: Ավարտել համայնքի քաղաքաշինական կադաստրի նախապատրաստման եւ վարման ուղղությամբ կատարվող աշխատանքները: Պատրաստել եւ մոտ ապագայում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը: Հետեւողական պայքար մղել ինքնակամ շինությունների դեմ: Շարունակել քաղաքի ճարտարապետական դեմքն աղավաղող մետաղական կամ փայտյա տնակների վերացման ուղղությամբ աշխատանքները: Շարունակել Վաչագան եւ Ողջի գետերի ափապաշտպան աշխատանքների եւ հունի մաքրման ուղղությամբ տարվող աշխատանքները: Առանձնահատուկ նշանակություն տալ քաղաքի փողոցների (առանձնապես ծայրամասային թաղամասերի) բարեկարգմանը:
- Բազմաբնակարան շենքերի կառավարումը, ինչպեսեւ դրանց պահպանումն ու սպասարկումը այսուհետ եւս համարել առաջնահերթ խնդիր: Ուշադրության կենտրոնում պահել դրանց տանիքների, ինչպեսեւ ջրահեռացման ու ջրամատակարարման համակարգերի նորոգումը, քաղաքային ենթակառույցների պահպանումն ու զարգացումը: Աշխատանքային նոր ձեւերով բարձրացնել համատիրությունների գործունեության արդյունավետությունը: Շարունակել խաղահրապարակների ցանցի ընդլայնման՝ նախկինում սկիզբ դրած քաղաքականությունը:
- Քաղաքապետարանի աշխատակազմում ստեղծել համապատասխան կառույց համայնքի տնտեսության, զբաղվածության եւ համայնքին առնչվող մյուս հարցերի վերաբերյալ վիճակագրությունը կենտրոնացնելու նպատակով՝ նկատի ունենալով, որ առանց ստույգ վիճակագրության հնարավոր չէ կազմել քաղաքի զարգացման հիմնավոր ծրագրեր:
- Մի քանի ամիս առաջ լրացավ Կապանի գլխավոր սրբավայրի՝ Վահանավանքի հիմնադրման 1100-ամյակը: Առաջիկայում ամենայն պատշաճությամբ նշել այդ հոբելյանը:

Առաջարկվող հիմնադրույթները, բնականաբար, չեն կարող վերջնական համարվել: Նախընտրական քարոզարշավի այս օրերին մենք հանդիպում ենք համայնքի բնակիչների, հասարակության գրեթե բոլոր խավերի ներկայացուցիչների հետ: Այդ հանդիպումների ընթացքում ստանում ենք բազմաբնույթ առաջարկություններ, դիտողություններ, որոնք միանգամայն այլ կերպ են պատկերացնում համայնքի հիմնախնդիրների լուծումը, ընթացիկ քաղաքականության առաջնահերթությունները: Բոլոր այդ նկատառումները հաշվի կառնենք եւ վերջնականապես (քարոզարշավի ավարտից հետո) կխմբագրենք հանրությանը ներկայացվող սույն փաստաթուղթը, ինչը ժամանակին հիմք կծառայի Կապանի քառամյա զարգացման ծրագրի ու համայնքային բյուջեի (ըստ տարիների) նախագծերի մշակման համար: Եվ որպեսզի մեր ծրագիրն ավելի իրատեսական լինի ու հիմնավոր, քաղաքի կարիքները՝ ճիշտ հաշվառված, ապա պետք է սույն փաստաթուղթն ամենայն ուշադրությամբ քննարկվի, ինչը եւ ակնկալում ենք ընտրողներից: Այնպես որ սպասում ենք ընտրողների արձագանքին, դիտողություններին ու առաջարկություններին:

**ԱՐՏՈՒՐ ԱԹԱՅԱՆ**

**Կապանի քաղաքապետի թեկնածու**

## ԽՈՍՔ ԵՎ ԳՈՐԾ ■ ՆՈՐ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐ՝ ՍՊՈՐՏՈՒՄ



**Միջազգային օլիմպիական օրվան նվիրված համաքաղաքային մրցումներ:**




**Կապանի պատվիրակությունը «Լավագույն մարզական ընտանիք» հանրապետական ամենամյա մրցույթում (Ծաղկաձոր):**

Սյունյաց երկիր
www.syuniacyerkir.am
ԵՐԵՔՇԱԲԹԻ • 28 ՕԳՈՍՏՈՍԻ 2012Թ • № 21 (262)

Գնահատանք

# Գեփանցին եւ հեփո՝ միասին



## ՀՐԱՆՏ ԷԼՉՅԱՆ

**Հարգարժա՛ն քաղաքապետ
Մենք՝ ընտրողներս եւ Դուք, կանգնած ենք «քարերը հաշվելու ճանապարհին»: Ուստիեւ ուզում եմ ներկայանալ Ձեր ընտրողների մի ստվար մասի անունից եւ ասել, որ չեմ մոռացել «Նամակ նորընտիր քաղաքապետին» հրապարակումս՝ տպագրված 2009թ. հունվարին «Սյունյաց երկրում»: Շատերին թվում էր, թե Դուք կանտեսեք իմ առաջարկները եւ քինախնդրությամբ կվերաբերվեք անձիս, բայց...**

Այդ նամակից հետո տասնյակ շնորհակալական զանգեր ստացա Սյունիքի բոլոր քաղաքներից: Ու վերջապես կայացավ նաեւ իմ ու Ձեր առաջին հանդիպումը: Ես շատ ուրախացա, որ Կապանի քաղաքապետը լիովին պատկերացնում է համայնքի առջեւ ծառացած խնդիրները, որ պատրաստ է կանգնել ստեղծագործողի, մշակույթը, հոգեւորը կրողի կողքին:

Անցել է չորս տարի, Ձեր աշխատանքի արդյունքը, ներդրումն ամենուր նկատվում են: Ուզում եմ մեջ բերել Ձեր արտահայտություններից մեկը. **«Իմ միակ մտահոգությունը երեխաներին փողոցից կտրելն է, նրանց ամբողջությամբ պետք է ներգրավել իրենց նախասիրած խմբակներում, դպրոցներում՝ լինի սպորտային, գեղարվեստական, շախմատի, եւ այնտեղ, որտեղ երեխան կարող է իր զբաղվածությամբ կտրվել մեր օրերում խիստ զարգացում ապրող նարկոմանիայից, վատ արարքներից: Պատրաստ եմ աջակցել ցանկացած առաջարկի, որը կնպաստի այդ հիմնախնդրի լուծմանը»:** Այդ գործում մշտապես մասնակից եմ եղել, եւ թույլ տվեք նկատել՝ Դուք գերազանցել եք Ձեր խոստումը, ինչի համար եւ հայտնում եմ բազմաթիվ ծնողների շնորհակալությունը, նաեւ շախմատի, պարարվեստի, գեղանկարչության, սպորտի, մշակույթի բնագավառի աշխատողների բարեմաղթանքները Ձեզ:

Եթե նախկինում՝ Ձեր պաշտոնավարությունից առաջ, քաղաքի վերակառուցման գործում ոչ մի քար քարին չի դրվել, այս վերջին տարիներին քաղաքի տարբեր անկյուններում հուսադրող շինարարական ու բարեկարգման աշխատանքներ են ընթանում: Բայց ուզում եմ համոզմունքս հայտնել, որ մենք նորից եկեղեցին պատսպարող, անհանդուրժելի մի նոր կառույց եւս չենք տեսնի: Այդ կառույցը դրել են ընտրողի, ժողովրդի «աչքի մեջ»: Մեզ հիացնում է կենտրոնական մայրուղու մայթերին՝ շուկայամերձ տարածքում, անկանոն կառույցների վերացումը: Քաղաքապետարանի աջակցությամբ եւ անհատների հովանավորությամբ կառուցված մանկական այգիներ, խաղահրապարակներ... Վերջին քսան տարվա տառապանքներից հետո Դուք, պարո՛ն քաղաքապետ, հուսադրող ներշնչանք եք պարգեւում դեպի նոր ժամանակներ:

Ուզում եմ նաեւ խոսքս ուղղել իմ համաքաղաքացիներին: Հարգելինե՛րս, դուք նկատել եք, թե ինչպիսի ջանասիրությամբ են աշխատում քաղաքի կոմունալ տնտեսության աշխատողները, անցյալում քաղաքում ընդամենը երեք մաքրող կար, իսկ հիմա Բաղաբերդ թաղամասից մինչեւ Սյունիք համայնքի խաչմերուկ քաղաքը սանիտարական «մշակման» է ենթարկվում ամեն օր: Բայց կա վատթարագույնը, այն, որ մենք անփութորեն, ուրիշները՝ անդաստիարակությամբ, մյուսները՝ միտումնավոր, անհարկի աղտոտում ենք մեր գեղատեսիլ քաղաքը:

Ոչ մի լրատվական միջոց չի արձագանքել «քաղաքը պահել մաքուր» մտածողությանը, անհրաժեշտ է, մինչդեռ, որ այդ մտածելակերպը համակի բոլորիս: Անհրաժեշտ է խստագույնս տուգանել աղբը չնախատեսված վայրում անփութորեն թափողին՝ տուգանքն օգտագործելով քաղաքի սանիտարական աշխատանքների համար:

Խոսելու շարժառիթներ շատ կան, հենց վերջերս ասֆալտապատվել է Մ.Պապյանի փողոցը: Քանի՞ տարի է՝ ոչ մի փողոց չէր վերանորոգվում, կամաց-կամաց սայլը տեղից շարժվում է: Շատերը կարող են այս գործին օգնել, մինչդեռ ունեւորները լռում են: Չմոռանամ նաեւ շնորհակալությունս հայտնել Շահումյան փողոցի գետափնյա հատվածը նորովի գեղեցկացնելու համար:

Պարտադի՞ր է արդյոք, որ ցանկացած նախարար կամ քաղաքապետ լինի այս կամ այն կուսակցության անդամ: Ո՛չ, պարոնա՛յք, առաջին կարեւոր պայմանը կամ սկզբունքը «հանուն հայրենի երկրի եւ ժողովրդի բարգավաճման» պետք է լինի: Հետո կարող են եւ կուսակցական լինել: Մագնատները, օլիգարխները, մեծահարուստները, մեր երկրի ընդերքին տիրացածներն այդ մասին խորհո՞ւմ են: Ո՛չ: Մեր ընտրյա՛լ պատգամավորներ, դուք այս վերջին տարիներին երբեւէ որեւէ հարց առաջադրե՞լ եք հանուն Կապանի բարգավաճման, հանուն ժողովրդի սոցիալ-տնտեսական առաջընթացի: Հանուն մեր Կապանի որեւէ քննադատական կամ գովեստի երկտող ուղղե՞լ եք քաղաքի բնակչությանը: Ո՛չ, Դուք՝ բոլորդ՝ նախարարներից մինչեւ ստորին ատյաններ, միշտ միայնակ եք թողել կապանցուն: Հիշե՛նք Ալբեր Քամյուի խոսքը. «Ով ցանկանում է իշխել, դադարում է ՄԱՐԴ լինելուց»:

Ինձ համար աբսուրդ էր «Հ1» հեռուստածրագրով հնչած հայտարարությունը. «ՀՀ-ում ամենաբարձր աշխատավարձը Սյունիքի մարզում է գրանցվել, այն կազմում է 142 000 դրամ»: Այսպիսի գեղարվեստական սուտ ոչ մի գրականության մեջ չես հանդիպի:

Կապանը ռազմավարական օրրան է, այստեղ տապալվել եւ ջախջախվել են մեր թշնամիները, եւ վերջին հաղթանակների շունչը սկսվեց Կապանից, որին մասնակից ենք եղել բոլորս: Ինչո՞ւ վարչապետները, նախարարները, պետական այլ անձինք մեր մեջ միայն պղինձ ու մոլիբդեն են փնտրում:

Սյունիքը վերջին կանգառն է, այն կողմում «անդունդներ» կան, ո՛չ պղինձ կա, ո՛չ էլ մոլիբդեն: Կան մեզ շրջապատող թշնամիներ:

Պարո՛ն քաղաքապետ

Ձեր կողմից արված բազմաթիվ անշահախնդիր ձեռնարկումներ, բարեգործություններ, այդ թվում՝ օգնություն հիվանդներին, հուղարկավորության խնդրի առջեւ կանգնած ընտանիքներին, նվերներ՝ լավագույն երեխաներին, դրամական օգնություններ աղքատին, ուսման վճարներ, խրախուսանքներ... Դրանք կապանցիների աչքից չեն վրիպել:

Քաղաքական այս թոհուբոհի ժամին ուզում եմ Ձեզ տեղյակ պահել, որ մշակույթի ոլորտի, մտավորական խավի բազմաթիվ ներկայացուցիչներ բարձր են գնահատում Ձեր գործունեությունը եւ սատարում են Ձեզ՝ հանուն Կապանի կատարվող աշխատանքներում եւ իրականացվելիք ծրագրերում:

Իսկ գիտե՞ք, թե ինչու այսօր մեր քաղաքի բոլոր հիմնախնդիրների մասին չխոսեցինք: Համոզված եմ, որ Դուք տեղյակ եք դրանցից յուրաքանչյուրին, համոզված եմ, որ յուրաքանչյուրի հետ կապված ծրագրեր ունեք: Ուրեմնեւ՝ մեր աջակցության դեպքում Դուք դրանք աստիճանաբար լուծման հանգրվան կհասցնեք: Ես դրանում համոզված եմ:

Իմ եւ ընթերցողիս անկեղծ բարեմաղթանքները Ձե՛զ:

■

## ԽՈՍՔ ԵՎ ԳՈՐԾ

## ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ՎԻՐԱՀԱՏԱԿԱՆ ԲԱԺԻՆԸ՝ ՆՈՐ ԵՎ ՆՈՐՈԳ ՏԵՍՔՈՎ



Լուսանկարը՝ Սեւակ Բաղդասարյանի



Լուսանկարը՝ Սեւակ Բաղդասարյանի

# Քեզ փեսա, Լսեցի ու հասկացա



ՎԼԱԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

**Դու չունեցար անհոգ մանկություն: Ապրեցիր դժվար պատանեկություն: Քայլեցիր նեղ, անանցանելի արահետներով: Չխարխափեցիր, չնվաստացար, չդարձար փողոցի գերին, չսպասցար քո բաժին գուրգուրանքը: Անցար պառապանքների փարիների միջով: Աչալուրջ քայլեցիր, կատարեցիր մորդ պատգամը՝ ուսում ստացար: Կատարեցիր կուսակցական պատասխանատու աշխատանքներ: Սիրվեցիր բոլոր ընկերներիդ կողմից:**

Փոխվեց հասարակական կարգը: Նոր պայմաններ թելադրվեցին ապրելու, արարելու համար: Մեկնեցիր Եվրոպա, աշխատեցիր, վաստակեցիր, Հին աշխարհը քեզ չգայթակղեց:

Շատ ավելի թանկարժեք բան էիր թողել այստեղ՝ մորդ ու հայրենի քաղաքդ: Ոչ ոքից չժառանգեցիր մի լումա, ամեն ինչ սկսեցիր զրոյից: Ամուսնացար, ունեցար երեք զավակ, տուն կառուցեցիր, տասնյակ եւ հարյուրավոր ծառ տնկեցիր, զենք առար, ելար հայրենիքի պաշտպանության: Կերտեցիր քո բաժին հաղթանակը:

Շարունակեցիր պրպտել, մտերիմ ընկերներիդ հետ գործի անցար, արտադրություն կազմակերպեցիր, արտադրանք տվեցիր: Քո անձնական օրինակով վարակեցիր աշխատողներիդ: Քեզ սիրեցին՝ տեսնելով նվիրումդ: Զարմանում էին, երբ փողկապով եւ կոստյումով Արտուրը հաշված րոպեների ընթացքում վեր է ածվում սեւագործ բանվորի, հագնում արտահագուստ, վերցնում .զոդման սարքը կամ մտնում վերանորոգվող մեքենայի տակ, աշխատում: Հաճախ եմ հանդիպել կրի արտադրամասի ստեղծման ժամանակ՝ մինչեւ ուշ գիշեր աշխատելիս: Առանց ուրիշին վնաս պատճառելու ստեղծեցիր քո բիզնեսի տարբեր ճյուղերը: Կարողացար աշխատանքով ապահովել 150-160 կապանցու, որոնք երախտապարտ են քեզ եւ մեծ հարգանք են տածում քո անձի հանդեպ: Չժառանգելով ո՛չ փող, ո՛չ գույք, ո՛չ հարստության այլ միջոցներ՝ կատարեցիր աներեւակայելին, ինչը կցանկանար յուրաքանչյուր հայ տղամարդ:

Զավակներիդ ուսման տվեցիր, ստացան մասնագիտական կրթություն, ամուսնացան:

Քո բարեկամությունը, շրջապատը, ընկերները քեզ ընդունում են առանց շահի: Ինչո՞ւ: Որովհետեւ էությամբ խաղաղ ես, մեղմ, ժպտերես, սիրով շփվում ես բոլորի հետ, եթե որեւէ խոստում չես կատարում, դիմացինդ հասկանում է, որ ուժերիցդ վեր է կամ անհնարին: Չեմ բացառում, որ կլինեն նաեւ մերժված եւ դժգոհ մարդիկ: Բառացիորեն քո ընտանիքի ու բարեկամության համար ամեն բան ստեղծելուց հետո որոշեցիր դառնալ քաղաքապետ: Հիշում եմ՝ մի զրույցի ժամանակ ասացիր. **«Մեր քաղաքում կարելի է շատ բան կատարել»:**

Կապանի բնակչությունը, ելնելով անցյալի դառը փորձից, իր ձայնը տվեց, եւ դու դարձար Կապանի քաղաքապետ:

Եթե ես ջանք թափեմ թվարկելու այն աշխատանքները, որ Ձեր նախաձեռնությամբ ու միջոցով է կատարվել, իհարկե, անհնար կլինի: Բայց, այնուամենայնիվ, սխալ չի լինի, որ ընթերցողը գոնե մի մասին հաղորդակից դառնա:

Նախ ասեմ՝ հասկանալի պատճառներով Սյունիքի մարզին հատկացված սուղ միջոցներից Կապանին փոքր մաս է բաժին հասնում: Եվ, բնականաբար, բոլոր մտահղացումները չէ, որ կյանքի են կոչվում: Ձեր քաղաքապետ դառնալուց հետո հարկերի հավաքման գործընթացը լրիվ կարգավորվեց: Բոլոր հարկատուներն առձեռն վճարելուց անցան բանկային վճարումների, արդյունքում՝ համարյա կրկնապատկվեցին բյուջեի մուտքերը: Հարկերի հավաքման բնագավառում մեր քաղաքն առաջիններից էր եւ է հանրապետությունում: Եվ դու արժանացար հանրապետության նախագահի գովեստի խոսքին:





Լուսանկարը՝ Հայկ Բաղդասարյանի




**2010թ. Արտուր Աթայանը տարվա մարդ է ճանաչվել «Յունիթայմ» ամսագրի կողմից:**

Քաղաքապետարանում ստեղծեցիք բարոյական հարաբերությունների եւ փոխադարձ հարգանքի մթնոլորտ: Նախկին աշխատակազմի մոտ 80 տոկոսը պահպանեցիր՝ վեր կանգնելով կուսակցական ամբիցիաներից, որը հասարակության մեջ դրական լիցք բերեց անձիդ հանդեպ:

Քո աշխատանքի մասին ամբողջական պատկերացում կազմելու նպատակով առաջարկ կա հրապարակել այն աղյուսակը, որում կերեւան կատարած աշխատանքները, ծախսված գումարները, իրականացված ծրագրերը: Ինչո՞ւ մեր քաղաքացիները չիմանան բազմաթիվ վերանորոգված վերելակների, հարթ տանիքների, հիվանդասենյակների, սանհանգույցների, քաղաքում ստեղծված խաղահրապարակների, կարուսելների, զբոսայգիների, տաղավարների մասին:

Աշխուժացավ սպորտային խմբերի, խմբակների գործունեությունը: Հանրապետությունում Կապանը ճանաչվեց որպես սպորտային քաղաք, որի համար նախագահի կողմից պարգեւատրվեց մեկ միլիոն դրամով: Մեր մարզիկները պարբերաբար մասնակցում են հանրապետական եւ միջազգային մրցումների:

Ակտիվացավ գեղարվեստական խմբերի աշխատանքը. հարյուրավոր երեխաներ հաճախում են տարբեր խմբեր եւ խմբակներ, ամռանը գործում են բակային ճամբարներ:

Շատ երեխաներ ամռան ամիսներին հանգստանում են Ծաղկաձորի եւ Հանքավանի ճամբարներում: Ավելացել են մանկապարտեզների խմբերը:

Դու կարողացար հավաքել շուկայի հարեւանությամբ գետափին շարված անճաշակ խանութ-կրպակները, հուսանք, որ կառուցվելիքը չի ուշանա եւ իսկապես աչք կշոյի:

Քո կառավարման ժամանակ սրճարանամոլությամբ տառապող Կապանում դադարեց կանաչ գոտիների վայրենի վաճառքը:

Մեր քաղաքում քեզ ճանաչում են նաեւ որպես բարերար. քո հիմնադրած ձեռնարկությունների միջոցների հաշվին բազմաթիվ համաքաղաքացիների վիրահատության, ուսման վարձի վճարման, ուրախությունների ու տխրությունների անցկացման համար հատկացումներ արեցիր:

Մեր քաղաքացիների օրհնանքը ստացար նաեւ այն բանի համար, որ աշխատանքի անցնելուց անմիջապես հետո ձեռնամուխ եղար քաղաքի մաքրության գործին, թաղամասերի՝ տասնյակ մետրերով ձգվող աղբակույտերը վերացան հենց առաջին շաբաթում:

Կոմունալ տնտեսության աշխատանքը հիմնովին վերակառուցվեց Վարդան Գեւորգյանի անմիջական ու անխոնջ աշխատանքի շնորհիվ: Համալրվեց աշխատողների քանակը, բարձրացավ աշխատավարձը: Իսկ անձնական մեքենայական պարկից մեկ «Կամազ» եւ մեկ տրակտոր հատկացրիր կոմունալ տնտեսության աշխատանքները կատարելու համար:

Եվ ի՞նչ եղավ 10 օրվա ընթացքում. մաքրվեցին քաղաքի փողոցները, բակերը, գետերը, լուսավորվեցին խավարի մեջ խարխափող թաղամասերը:

Քո ընտրողներն ըմբռնումով են մոտենում այն իրողությանը, որ քաղաքում բարեկարգման շատ աշխատանք կա դեռեւս, առանձնապես՝ քանդված մայթեր:

Որպես Կապան քաղաքի բնակիչ՝ կցանկանայի, որ եւս մեկ անգամ ընտրվեք Կապանի քաղաքապետ եւ շարունակեք մեծ ուշադրություն դարձնել քաղաքի վերանորոգման, բարեկարգման աշխատանքներին, որ ունենանք ավելի գեղեցիկ քաղաք:

Շուկայամերձ գետափին կառուցվող տաղավարների ստեղծումը մեծ աշխատանք է քաղաքի համար, ինչը բնակչությունն ընդունում է եւ գնահատում: Գնահատվել ես ե՛ւ մարզի իշխանությունների, ե՛ւ հանրապետության նախագահի կողմից, անգամ «Յունիթայմ» ամսագրի գլխավոր մրցանակին ես արժանացել (2010թ.) տարվա մարդ անվանակարգում: Եվ այս ամենը՝ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում:

Քաղաքի համար խոշոր գործ կլինի հացի գործարանի եւ N զորամասի մերձակայքում՝ Ողջի գետի վրա, ավտոմոբիլատար կամրջի նախագծումը եւ կառուցումը, որը կբեռնաթափեր Հունան Ավետիսյան փողոցի երթեւեկությունը:

Կցանկանայի, որ քաղաքի բոլոր խաչմերուկները լուսակարգավորվեին, որ վերջ դրվեր սրճարանամոլությանը, որ կանաչ գազոններում ծաղիկներ աճեցվեին, որ Չարենցի փողոցը նորմալ փակվեր եւ դառնար գետափնյա զբոսավայր, որ տուգանքներ սահմանվեին գետերի աղտոտման համար: Կարելի է հորդորել խանութների, տաղավարների, գրասենյակների տերերին՝ իրենց շինության մերձակա տարածքի բարեկարգման համար (քաղաքի ճարտարապետի անմիջական հսկողության ներքո): Չէ՞ որ շատերն արդեն դա արել են: Վատ չէր լինի մշակույթի պալատում մեկ սենյակ առանձնացնել՝ այն պայմանականորեն անվանելով «ուսուցչի տուն»՝ զբաղվելու, թերթերին հաղորդակից լինելու, «կլոր սեղաններ» կազմակերպելու համար:

Վերջում ուզում եմ դիմել Կապան քաղաքի բնակիչներին՝ վեր կանգնենք նեղ անձնական, շահեկան, կլանա-թայֆայական մտածողությունից, դավանենք ավելի բարձր արժեքներ, լավ աչքով նայենք նաեւ մեր աստիճանավանդակներին, մեր բակին, մեր քաղաքին:

Ցավ եմ ապրում, երբ տեսնում եմ նոր աճող ծառից պոկված տերեւը, ծխախոտի շպրտած մնացորդը, արեւածաղկի չկերվածը՝ մայթերին, փողոցների եւ բակերի ամենօրյա աղտոտումը: Յուրաքանչյուրս մեր ապրած օրվա մեծ մասն անց ենք կացնում այդ նույն փողոցում, բակում, զբոսայգում եւ այլուր: Նոր, երիտասարդ սերնդի աչքը պետք է միշտ տեսնի մաքուր, գեղեցիկ, ծաղկապատ միջավայր:

■



Լուսանկարը՝ Մելիք Բաղդասարյանի

Արփուր Աթայանը թոռնիկներ Արփուրիկի եւ Նռանեի հետ:

# Կապանցու՝ մեր ուզած փեսակը

ԳԱՅԱՆԵ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

**Ինչպես յուրաքանչյուր մարդ ու անհատ, այնպես էլ նա, գալիս է մանկությունից: Իսկ այն պարզ, հասարակ ու մաքուր էր: Արփուր Աթայան անձ-անհատի ձեւավորումը խարսխվեց իմաստուն փափի եւ բարի ու ազնիվ մոր դաստիարակության վրա: Դրան ավելացան հայ եւ համաշխարհային գրականության մեծերի գործերը, որոնք նա կարդում էր սկսած դպրոցական վաղ փարիներից: Բալզակի, Հյուգոյի, Ռեմարկի, Րաֆֆու, Մաթեւոսյանի եւ այլ հսկաների կերտած կերպարները նրան սովորեցնում էին ուժեղ լինել, հաղթահարել դժվարությունները, բացել սեփական կածանը եւ շարժվել այդ կածանով՝ ազնիվ ու արժանապատիվ կերպ:**

Ժամանակն ու կյանքն առաջ էին գնում, եւ հասարակ երիտասարդի հոգում նոր արժեքներ էին ձեւավորվում. հայրենասիրություն, հպարտություն ազգային ու բարոյական բարձր արժեքների նկատմամբ:

Ոչինչ պատահական չի լինում. բնատուր խելքը, քաղաքական հասունությունը, Արցախյան ազգային-ազատագրական պայքարի վերելքը նրան բերեցին հայ ազգային-քաղաքական կուսակցության՝ ՀՅԴ-ին անդամակցություն, որի ամենահին ու ամենաակտիվ անդամներից է նա այսօր Կապանում:

Աթայանի քաղաքական հասունությունը բերեց հաջորդ քայլին. 2008թ. առաջադրվեց Կապանի քաղաքապետի թեկնածու: Չեմ ուզում անդրադառնալ այդ ընտրություններին: Շատ բան արդեն գիտենք, բայց մի բան ակնհայտ էր. չլինեին գործարարի ու տնտեսական ղեկավարի բարձր որակները, Արտուր Աթայանի կայացած լինելը, մարդկային ու բարոյական լավագույն արժանիքներն ու անսահման բարությունը, տիեզերական եւ ոչ մի ուժի միջամտություն նրան չէր կարող դարձնել քաղաքապետ: Կապանցիները դա գնահատեցին ու ընտրեցին իրենց նոր քաղաքապետին՝ լավագույն ակնկալիքներով:

Նոր քաղաքապետի ընտրությունը համընկավ տնտեսական ճգնաժամի սկզբնական շրջանին, դժվարությունները շատ էին, նախկինից էլ ստացած ժառանգությունը… Չէ՛, չէ՛, նա այդ մասին չի սիրում խոսել, պարզապես չի ուզում օգտագործել այն իր օգտին:

Առաջին քայլը, որ ձեռնարկեց, քաղաքում լարվածության մթնոլորտի (իսկ այն իրոք շիկացած էր) թուլացումն էր: Աթայան-մարդու հանդուրժողականության, դիմացինին ընդառաջ գնալու, մարդկանց լսելու, նրանց օգնության կանչելու, քաղաքական կուլտուրայի եւ այլ հատկանիշների շնորհիվ կարճ ժամանակում վերացավ լարվածությունն իշխանավորների, աշխատակիցների, հասարակ քաղաքացիների միջեւ: Այս օրերին ինձ համար շատ զարմանալի է, որ քաղաքապետի թեկնածուներից մեկը, որպես առաջնահերթ քայլ, ցանկանում է ընտրվելու դեպքում վերացնել վախի մթնոլորտը եւ «ազատություն» բերել Կապանին: Չեմ հասկանում. սա անտեղյակությո՞ւն է, չիմացությո՞ւն, թե՞ «կարեւոր բան» ասելու իմիտացիա:



Լուսանկարը՝ Մելիք Բաղդասարյանի

Բնական է, յուրաքանչյուր իշխանափոխություն իր հետ բերում է նոր փոփոխություններ, որոնցից դժգոհություններ նույնպես լինում են: Մեկի անձնական հավակնությունները բավարարում չգտան, մյուսն իրեն չգնահատված համարեց, երրորդը կարծեց, որ ինքն անփոխարինելի է, մեկ ուրիշին էլ պատեց իր՝ վաղուց գնացած գնացքի խրոխտ շչակի կարոտախտը: Աթայան քաղաքապետի քաղաքական համարձակությունը, պատասխանատվությունն այնքան հասուն էին, որ գնաց համարձակ ու անսպասելի քայլի. պաշտոնանկ արեց քաղաքապետարանի բարձրաստիճան պաշտոնյային՝ ունենալով հիմնավոր ու անհանգստացնող պատճառներ: Դա արեց կոռեկտ, առանց մատնանշելու եւ հրապարակելու իրական պատճառները (իսկ գո՞ւցե անհրաժեշտ էր դա ժամանակին անել):

Աշխատանքային գործունեության ընթացքում կապանցիները բազմիցս ականատես եղան նրա համարձակ դիրքորոշմանը: Կառավարության արտագնա նիստերում, խորհրդակցություններում, բարձրաստիճան պաշտոնյաների հետ հանդիպումների ժամանակ համարձակորեն վեր էր բարձրացնում քաղաքի հիմնախնդիրները, հետեւողական լինում շատ հարցերի լուծման հարցում, պահանջատիրոջ դիրքերից ներկայացնում կապանցիներին հուզող հարցերը: Հարյուրավոր կապանցիներ ընդունելության են եղել նրա մոտ: Համբերատար լսել է բոլորին, ինչպես կարողացել է՝ ընդառաջել ու օգնել է, ընթացք տվել շատ պահանջների: Տխրել է, երբ չի կարողացել որեւէ բանով մեկին զորավիգ լինել: Առավել տխրել է, երբ դիմացինը չի հասկացել…

Նրա քաղաքացիական նախաձեռնությամբ սկսվեց Կապանի հիվանդանոցի վերանորոգումը: Աթայանը մեծ խանդավառությամբ իր շուրջը համախմբեց Կապանն ու կապանցուն սիրող գործարարներին, համոզեց ձեռնարկի արդյունավետության մեջ: Համաձայնեք, սեփական միջոցներով մարզկենտրոնի հիվանդանոցի վերանորոգումն իրականացնել շատերը չէին կատարի՝ ունենալով ավելի մեծ հնարավորություններ: Կային մարդիկ, որ համոզում էին քաղաքապետին գլխացավանքի մեջ չընկնել, առավել եւս, որ հիվանդանոցի նորոգումը ՏԻՄ մարմնի գործառույթներից չէ: Սակայն Աթայան-կապանցին համոզված է, որ իր համաքաղաքացիները՝ այն էլ բժշկական ծառայության կարիք ունեցող, արժանի են վերանորոգված ու կահավորված հիվանդասենյակներում բուժվելու:

Քաղաքապետի գործունեությունն ակնհայտ դարձրեց նրա ներկայանալի լինելը. պատշաճ պահվածք, դիվանագիտական մոտեցում, ղեկավարին բնորոշ արժանապատիվ կեցվածք օտարերկրյա դեսպանների, միջազգային կազմակերպությունների, սպորտի, մշակույթի, գիտության ոլորտի ներկայացուցիչների հետ հանդիպումներում, արտասահմանյան այցելությունների ժամանակ:

Այդ ամենը մի իրական հիմք ունի. նրա մարդկային որակները եւ անսահման սերը քաղաքի նկատմամբ: Աշակերտական եւ ուսանողական կոլեկտիվների հետ հանդիպումներում Կապանատան նկատմամբ սերը նրա զրույցների առանցքն է: Դրան հետեւում է նաեւ պահանջը. «Հիշե՛ք, դուք պարտք ունեք ձեր քաղաքին»: Սրանք զուտ խոսքեր չեն: Դա նաեւ նրա ապրելու կերպն է ու զավակների դաստիարակության սկզբունքը: Աթայանի երկու որդին բոլոր հնարավորություններն ունեին մնալու մայրաքաղաքում կամ մեկնելու արտերկիր, սակայն ուսումն ավարտելուց հետո վերադարձան հայրենի քաղաք:

Մարդ, քաղաքացի, քաղաքապետ ու ընտանիքի հայր լինելուց զատ՝ Արտուր Աթայանն այսօր մի շատ բարձր պաշտոն էլ ունի՝ Աթայան-պապիկ: Օրվա վերջում տուն մտնելով՝ գրկում է իր երկու հրաշքթոռնիկին, հայացքը հառում Խուստուփին ու երկար մտորում: Նույնիսկ այդ պահին չի ազատվում օրվա հոգսերից, ավելին՝ նախագծում է վաղվա անելիքը: Նոր օրը սկսվում է նորից Խուստուփին նայելով: Մտքում կրկնում է իմաստուն տատի աղոթքը եւ ավելացնում. «Ես սիրում եմ իմ քաղաքը, այստեղ իմ թոռներն ու ծոռներն են ապրելու»:

■

# Արտուր Աթայանի վերընտրությունը բխում է Կապանի շահերից

## Կապանի քաղաքապետի թեկնածու Արտուր Աթայանի նախընտրական շտաբի հայտարարությունը



Կապան քաղաքի մուտքն ազդարարող հուշասյունը:



**Սեպտեմբերի 9-ին կայանալիք ՏԻՄ ընտրությունները եւ մասնավորապես Կապանի քաղաքապետի ընտրությունը համայնքում առաջացրել են նոր իրավիճակ, որին ավելի շատ բնորոշ են աճող լարվածությունը, հերթական անգամ հանրությանը պրոհելու փորձերը, քաղաքական ուժերի, հասարակական շերտերի, տնտեսության ու գործադիր իշխանության մեջ ազդեցիկ դիրքեր զբաղեցնող անձանց շահերի բախումը: Եվ պատասխանատու այս հանգրվանում, երբ վճռվում է համայնքի ղեկավարի ով լինելու հարցը, երբ որոշ ուժեր ձգտում են համայնքի բնակիչներին շրջանցելով իրենց կամքը պարտադրել Կապանին, մենք չենք կարող պասիվ հայեցողի դերում լինել եւ սպասել, թե ինչ հունով կընթանան զարգացումները:**

Առաջին հարցը, որի վերաբերյալ մեր դիրքորոշումը կուզենայինք բարձրաձայնել, հետեւյալն է՝ մենք անթույլատրելի ենք համարում ցանկացած միջամտություն Կապան համայնքի ղեկավարի ընտրությանը: Անցել են ժամանակները, երբ Կապանը կարող է ունենալ դրածո քաղաքապետ: Համայնքի ղեկավարի ընտրությունը բացառապես համայնքի ընտրողների գործն է:

Երկրորդ. չի կարելի թույլ տալ, որ Կապանը վերադառնա անցյալին, չի կարելի կույր ձեւանալ եւ չտեսնել, որ հասարակությունն անընդհատ փոփոխվող օրգանիզմ է, որ հասարակության կառավարումն անընդհատ արդիականացում է պահանջում, եւ տասը-քսան տարի առաջ կիրառված մեթոդներն այլեւս պետքական չեն: Հասարակության կառավարումը նոր մոտեցումների պահանջ ունի:

Երրորդ. գործող քաղաքապետ Արտուր Աթայանը ցանկություն է հայտնել վերընտրվել համայնքի ղեկավարի պաշտոնում: Եվ այսօր ամենատարբեր կարծիքներ են հնչում նրա գործունեության մասին, մարդիկ քննարկում են նրա վերընտրության նպատակահարմարությունը: Բոլորն էլ, անտարակույս, իրավունք ունեն եւ կարող են կարծիք հայտնել, դատողություններ անել այդ հարցերի շուրջ: Բայց, կարծում ենք, ամենքից շատ մենք գիտենք գործող քաղաքապետին, քանզի չորս տարի նրա հետ գտնվել ենք կողք կողքի ու համատեղ աշխատել, ծառայել միեւնույն գաղափարին: Անցած այդ ճանապարհը թույլ է տալիս ասել՝ Արտուր Աթայանը կարճ ժամանակամիջոցում ապացուցեց, որ դժվարին ու հակասական մեր օրերում կարող է մարզկենտրոնի արժանավոր առաջնորդը լինել: Նա հասցրեց անել ավելին, քան խոստացել էր ընտրողին, քան նախատեսել էր համայնքի զարգացման քառամյա ծրագրում: Նա քաղաքապետարանի՝ տարիներով սասանված հեղինակությունը նոր մակարդակի բարձրացրեց: Նա մինչեւ վերջ զերծ մնաց նախապաշարումներից ու կոմպլեքսներից եւ հանուն Կապանի համագործակցեց քաղաքական բոլոր ուժերի, պետական ու հասարակական մարմինների, առանձին անհատների ու գործիչների հետ: Նա եւս մեկ անգամ ապացուցեց, որ գործի մարդ է, որ իր հող ու ջրի զինվորն է, որ պատրաստ է անմնացորդ նվիրաբերվել իր քաղաքին: Այնպես որ Կապանն այսօր, ինչպես 2008 թվականին, ունի Արտուր Աթայան տեսակի ղեկավարի պահանջարկ: Իզուր չէ, որ նրան առաջադրելու պահանջ են ներկայացրել բազմաթիվ ընտրողներ, հասարակական-քաղաքական ուժեր:

Անշուշտ, Կապանում կան շատ արժանավորներ, ովքեր ի վիճակի են հավուր պատշաճի ղեկավարել քաղաքային մեր համայնքը: Եվ շատ ցանկալի կլիներ նրանց տեսնել այսօրվա թեկնածուների (հավակնորդների) շարքում, որպեսզի ընտրողն այլընտրանքի ավելի մեծ հնարավորություն ունենար: Ուստիեւ՝ նորմալ ենք վերաբերվում յուրաքանչյուրի ձգտումին՝ ընտրվելու Կապանի քաղաքապետ: Ստեղծված իրավիճակում եւ առկա թեկնածուների պարագայում, սակայն, Արտուր Աթայանն ընդգծված այլընտրանք չունի: Ավելին, Արտուր Աթայանի վերընտրությունը բխում է Կապանի ու կապանցիների շահերից: Նա լավագույնս է պատկերացնում քաղաքի առջեւ ծառացած խնդիրները եւ դրանց լուծման վերաբերյալ ունի իրատեսական ծրագրեր, որոնց լուծմանը սպասում են համայնքի բնակիչները: Նա ներկա փուլում քաղաքապետարանի անկախ, ինքնուրույն, արժանապատիվ գործունեության, համայնքի հավասարակշռված ընթացքի գրավականն է:

Հավանություն տալով Արտուր Աթայանի թեկնածությանը՝ միաժամանակ կոչ ենք անում մեր ընտրողներին ու համակիրներին սեպտեմբերի 9-ին քվեարկել նրա օգտին:

Մենք բոլոր թեկնածուներից ու նրանց նախընտրական շտաբերից ակնկալում ենք բացառապես քաղաքակիրթ եւ օրինավոր ընտրապայքար:

Մենք ակնկալում ենք, որ N38 ընտրատարածքային ընտրական եւ տեղամասային ընտրական հանձնաժողովներն իրենցից կախված ամեն ինչ կանեն, որպեսզի ՏԻՄ ընտրությունները սեպտեմբերի 9-ին անցնեն օրինականության, ազատության պայմաններում, որպեսզի ընտրողներն ունենան ազատ կամարտահայտության, խղճի մտոք քվեարկելու լիարժեք հնարավորություն:

Մենք կոչ ենք անում համայնքի ընտրողներին՝ ակտիվ դիրքորոշում ու մասնակցություն ունենալ քաղաքապետի ընտրությանը: Ուզում ենք, որ յուրաքանչյուր ոք հիշի, թե որքան կարեւոր է իր մասնակցությունը սեպտեմբերի 9-ի քվեարկությանը:

**Կապանի քաղաքապետի թեկնածու**
**Արտուր Աթայանի նախընտրական շտաբ**
**25 օգոստոսի 2012թ.**
**ք. Կապան**

Սյունյաց երկիր

Գլխավոր խմբագիր՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

**Հասցե՝** Կապան, Շահումյան 20/32:
**Հեռախոս՝** (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 06 28 02:
**Էլ.փոստ՝** syuniacyerkir@mail.ru
**Ինտերնետ՝** www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում:
Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել:
Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«**ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ**» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:
® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

**ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-ԻՆ ԿԱՊԱՆԸ ԿՔՎԵԱՐԿԻ**
**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ**
**ԱՐՏՈՒՐ ԱԹԱՅԱՆԻ** ՕԳՏԻՆ




**ԲՈԼՈՐ ԿԱՊԱՆՑԻՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ**